ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

1 . Մեկնում Մայր Աթոռից

Մայիսի 8-ի առավոտյան Ս. Էջմիածնի Մայր Տաճարում էին հավաքվել Մայր Աթոռի Միաբանությունը, Հայաստանի թեմական Առաջնորդները, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը, Մայր Աթոռի պաշտոնեությունը, դպրոցական աշակերտներ Վաղարշապատից և Կոտայքից, բազմաթիվ հավատացյալներ: Հանդիսավոր լռություն կար միշտ աղմկոտ և ուրախ Մայր Տաճարի բակում: Բոլորի հայացքները գամված էին Վեհարանի դռներին: Եվ այդ հանդիսավորության մեջ կարծեք լուռ աղոթում էին դարավոր Մայր Տաճարն ու հայոց ժողովուրդը:

Ժամը 11-ն է: Բարձրաձայն ղողանջում են Մայր Տաճարի զանգերը: "Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա..."-միաձայն ու խրոխտ սկսեցին երգել ճեմարանականները: Հոգևորականաց թափորով, վստահ ու հաստատակամ քայլերով, հայացքն ուղղած Միածնաէջ Տաճարի գմբեթին շողացող խաչին, Մայր Տաճար մուտք գործեց Հայոց Հայրապետը: Աղոթելով Իջման Սեղանի առջև, այնուհետև ծունկի իջավ, համբուրեց Ս. Խաչը: "Մեկշաբաթյա այցելությամբ, հրավերովը Հունաց Տիեզերական Պատրիարք Բարթոլոմեոս Ա-ի և Թուրքիայի Հայոց Պատրիարքության, գնում եմ Թուրքիա: Գնում եմ Հայ և Հույն Եկեղեցիների միջև Ս. Ներսես Շնորհալու ոգով մշակված հարաբերություններին առավել կարկ տալու նպատակով, իսկ Կ. Պոլսո մեր Պատրիարքության և պոլսահայ կյանքի հետ ծանոթացումը անհրաժեշտ և բարերար կնկատեմ, նրանց փոխանցելու համար Միածնաէջ Մայր Աթոռի լույսն ու Հայրենիքի ջերմությունը և ցգալու նրանց սերն ու նվիրումը Մայր Աթոռույս: Եվ ինչքա՜ն լուսառատ է այսօր մեր Մայր Տաճարը...»: Ապա Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլորին և ուղևորվեց դեպի "Զվարթնոց" օդանավակայան: "Բարի երթ և բարի վերադարձ, Վեհափառ" - մաղթանքը կար բոլորի շուրթերից արտասանված այս բառերի մեջ:

Սպատ ու անկախ Հայաստանի Հանրապետության եռագույնով երիվված օդանավն անցնում էր պատմական Հայաստանի երկնքով: Օրը պարզ էր ու արևոտ: Ցածում հատ ու կենտ գյուղեր էին երևում՝ մի քանի տասնյակ տներով, հիմնականում՝ տղմոտ, ջրառատ գետերի ափերին, իսկ հարյուրավոր կիլոմետրեր անմարդաբնակ էին: Դեռ ձյունապատ էին ոչ միայն Մասիսի լանջերը, այլև Հայկական Պարն ամբողջությամբ: Սվետյաց երկիր, ուր դեռ անթաղ են ոսկորները մեր նահատակների... :

2 . Ժամանում

Թռիչքը տևեց երկու և կես ժամ: Ժամը 2.30-ին, պատմության մեջ առաջին անգամ, ապատ ու անկախ Հայաստանի Հանրապետության օդանավը Ամենայն Հայոց Հայրապետին իր շքախմբի հետ հասցրեց պատմական Կոստանդնուպոլսի կենտրոնական՝ Եշիլգյուղի օդանավակայան:

Վեհափառ Հայրապետի շքախումբը բաղկացած էր հետևյալ անդամներից. "Էջմիածին" ամսագրի խմբագիր Գերաշնորհ Տ. Ասողիկ Եպիսկոպոս Արիստակեսյան, Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Աբրահամ Վարդապետ Մկրտչյան, Մայր Աթոռի Միաբան Տ. Սեպուհ Վարդապետ Զուլչյան, գավազանակիր Տ. Արտակ Աբեղա Տիգրանյան և նկարահանող Պրն. Ստեփան Հաճյան: Տիեզերական Պատրիարքի հետ հանդիպմանը և Թուրքիո Հայոց Պատրիարքության 535-ամյակի հանդիսություններին մասնակցելու համար ժամանել էին Երուսաղեմի Հայոց Պատրիարքության կողմից Գերաշնորհ Տ. Դավիթ Արքեպիսկոպոս Սահակյանը, Արևմտյան Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ և Փարիզի Հայոց Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գյուտ Արքեպիսկոպոս Նագգաշյանը, Ռումինիայի և Բուլղարիայի Հայոց Թեմի Առաջնորդ Տ. Տիրայր Արքեպիսկոպոս Մարտիկյանը, Մայր Աթոռի Միաբան, այժմ Հռոմում ուսանող Տ. Միքայել Ծ. Վարդապետ Աջապահյանը, իսկ մեկ օր հետո ժամանեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կողմից՝ Գերաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճյանը:

Օդանավակայանի պատվո սրահում Վեհափառ Հայրապետին և իր շքախմբին դիմավորեցին Հունաց Տիեզերական և Թուրքիո Հայոց պատրիարքությունների պատվիրակությունները: Հունաց պատվիրակությունը գլխավորում էր դոկտ., պրոֆեսոր Խրիսոստոմոս Կոնստանդինիդիս Եփեսոսի Միտրոպոլիտը, անդամակցությամբ դոկտոր Խրիսոստոմոս Կալաիդիտիս՝ Զմյուռնիայի ու Կուրիլլոս Դոագովանտիս՝

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԶՐՈՒՑՈՒՄ Է ԴՈԿՏ. ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍ ԿԱԼԱԻԴԻՏԻՍԻ ՀԵՏ

Մելնիկիայի Միտրոպոլիտների: Թուրքիոյ Հայոց Պատրիարքության պատվիրակությունը գլխավորում էր Ամենապատիվ Տ. Գարեգին Գապանճյան Պատրիարքը, անդամակցությամբ Պատրիարքական փոխանորդ Գերաշնորհ Տ. Շահան Արքեպիսկոպոս Սվաճյանի, Կրոնական ժողովի ատենապետ Գերաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մուրադյանի, Պատրիարքարանի դիվանապետ արժանապատիվ Տ. Գրիգոր ավագ քահանա Տամատյանի, Հայրապետի՝ Կ. Պոլիս այցելության հյուրասիրման կարգադիր հանձնախմբի ատենապետ Պրն. Արետ Երկանյանի:

Սուաջին իսկ պահից ակնհայտ դարձավ, որ Վեհափառ Հայրապետի Թուրքիա այցելությանը անհամբեր սպասում էին ոչ միայն հույն ու հայ հոգևորականները, այլև թուրքական և այլ երկրների լրատվական կազմակերպությունները: Տասնյակ լրագրողներ, ցինված նկարահանող ու ձայնագրող սարքերով, երկու ժամ շարունակ շրջապատել էին Վեհափառ Հայրապետին: "Ինչո՞ւ է Հունաց Պատրիարքը Ստամբուլ հրավիրել Հայոց Կաթողիկոսին"... բազմաթիվ էին հարցերն ու հարցականները: Հայոց և Հունաց ուրախության և հրճվանքի կողքին հարցականներ և մտահոգություններ ուներ լրատվությունը, և այդ մտահոգությունն ակնհայտ էր:

Մաքուր ու հստակ անգլերենով պատասխանելով լրագրողների հարցերին, Նորին Սրբություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա-ը փառք տվեց Աստծուն՝ իր այս այցելության իրագործման համար, և արտահայտեց իր գոհունակությունը: Սպա անդրադարձավ Բարթոլոմեոս և Գարեգին Բ Պատրիարքների հրավերներին, Հայ և Հույն Եկեղեցիների դարավոր եղբայրական հարաբերություններին:

Վեհափառ Հայրապետը "պատմական կարևոր պահ" որակեց իր ժամանումն ու այցելությունը Թուրքիա, ակնարկեց Հայ և Թուրք ժողովուրդների փոխհարաբերությունների բարելավումը՝ երկխոսության, խաղաղության ու արդարության ճանապարհով:

Իսկ Հայաստանից եկած մամուլի և Թուրքիայի հայ մամուլի և լրագրողների այն հարցումին, թե ինչ ակնկալիքներ ունի Վեհափառ Հայրապետը իր այս այցելությունից, Նորին Սրբությունը պատասխանեց. "Անհուն սիրով կնայիմ հառաջիկա օրերուն, երբ Աստված ինձի պիտի պարգևե մարդկայնորեն կարելի գերագույն երջանկությունը՝ իմ ժողովուրդիս հետ ըլլալու և իմ երակներուս մեջ իմ ժողովուրդիս սրտին տրոփը զգալու: Քաջ գիտեմ, որ Իսթանպուլի մեր հայությունը այնքան սերտորեն միաշաղախված է, պիտի ըսեմ ընդելուզված, մեր ժողովրդի հոգևոր ապրումներուն, արժեքներուն, մեր Եկեղեցու ամբողջ էության հետ, որ կնախազգամ, թե ինձի համար հոգեկան զորացման, քաջալերության առիթ մը պիտի ըլլա այսպիսի եկեղեցասեր, այսպիսի հայրենասեր և հաղախոս հայության հետ շաղախվիլը: Ասոր համար կրնամ ըսել, թե հուզումով է, որ այսօր ոտք կդնեմ այս հողին վրա և առաջին վայրկյանին կողջունեմ ու կգնահատեմ մեր հայկական մամուլը այս գաղութին

մեջ: Մամուլը այսպես սրտեռանդ ընդառաջումով եկավ օգնական՝ ինձի հանդիպելու և մամուլի հաղելիի էջերուն մեջեն իմ ժողովուրդը ինձի բերելու: Ապրի՛ք բոլորդ:

Այս առթիվ ես կուզեի նաև հայտնել, որ երեսունհինգ տարիներ վերջ, առաջին անգամ ըլլալով Մայր Աթոռի Ամենայն Հայոց Կաթողիկոսության Հայրապետը հանդիպում պիտի ունենա Հունաց Պատրիարքին հետ: Նորին Սրբություն Բարթոլոմեոս Ա-ի հետ մեր անձնական կապերը երկար տարիներ կհաշվվեն, և մենք իրար հանդիպելու առիթներ ունեցած ենք այն ատեն, երբ ես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս էի: Այժմ, առաջին անգամ է, որ առավել ևս պիտի սերտանան և գործնապես պտղաբեր պիտի դառնան երկու Եկեղեցիներու հարաբերությունները, և ես ամեն ճիգ ու ջանք ի գործ պիտի դնեմ այս ուղղությամբ: Իսկ մեր Կ. Պոլսո Պատրիարքին՝ Գարեգին Արքեպիսկոպոսին հրավերն ալ իմ սրտիս շատ մոտ էր: Հետևաբար այս այցելությունս կրկնակ հրավերով է, կրկնակ նպատակով է, և թող Աստված օրհնե ու առավել ևս պտղաբերե թե՛ մեր ժողովուրդի համար, թե՛ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համար և թե՛ ամբողջ հայ ժողովուրդի, Հայոց Մայր Հայրենիքին ու Սփյուռքի ողջ հայության համար":

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Հայաստանի հեռուստատեսության աշխատակիցների միջոցով հետևյալ հայտարարությունը արեց հայրենաբնակ հայ ժողովրդին.

"Այս առթիվ մոտեն պիտի ճանչնամ Իսթանպուլի մեր հայ ժողովուրդին զավակները: Այլ խոսքով, մամուլեն իմանալը կամ տեղեկագիրներով միայն տեղեկություն ստանալը ինձի համար բավարար չէ, որովհետև Հոգևոր Հովվի մը համար անհրաժեշտ է, որ ինքը զգա իր ժողովուրդին ներկայությունը և անոր համար Իսթանպուլահայ մեր կյանքին հետ ծանոթացումը անհրաժեշտ կենկատեմ իմ հովվապետական պաշտոնիս կատարման համար: Կուզեմ ամեն ջանքով ուժ տալ, թափ հաղորդել այն բոլոր եկեղեցական գործերուն, որոնց նվիրված է այս գաղութը:

Ես քաջատեղյակ եմ, թե ինչպես Իսթանպուլի հայությունը իր արյան մեջ իբրև բաղկացուցիչ տարր ունի եկեղեցին: Եվ իմ սրտի, սիրո ու հովվի պարտքն է ատիկա տեսնել և քաջալերել: Ապա նաև կուզեմ ծանոթանալ իրենց կրթական ու մշակութային գործին, Պատրիարքարանին, մեր բոլոր եկեղեցիներուն, ընկերային, բարեսիրական ու բարեգործական հաստատություններուն: Ի վերջո ազգ մը, ժողովուրդ մը, եկեղեցի մը իր հաստատություններով և իր կազմակերպական կյանքով է գոյավոր: Հետևաբար թվով ու թվանշանով, անունով ու թուղթով չէ, որ պիտի ճանչնամ այս գաղութը, այլ պիտի ճանչնամ կենդանի հաղորդակցությամբ և պիտի ջանամ իմ գերագույն կարելին ի գործ դնել, որ Աստուծո շնորհիվ և իրենց ջանքերով հառաջ երթա մեր Իսթանպուլահայ ժողովուրդին առողջ և առողջարար կյանքը":

Ապա Վեհափառ Հայրապետը իր շքախմբով ուղեկցվեց Հունաց և Հայոց Պատրիարքարանների կողմից նախապես պատրաստված իջևանատեղի՝ Քոնրադ Հիլթըն հյուրանոց:

ԵՌՕՐՅԱ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՆԵՐ ՀԱՅ ԵՎ ՀՈՒՅՆ ՀՈՎՎԱՊԵՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ

1. Հանդիպում

Նույն օրը, երեկոյան ժամը 19.15-ին, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով, ուղեկցությամբ Գարեգին Բ Պատրիարքի և Հույն Եկեղեցու Միտրոպոլիտների, առաջնորդվեց Ֆեների Հունաց Պատրիարքարան: Երբեմնի հպոր այս կենտրոնը այժմ ամփոփված է մեկ կենտրոնական շենքի մեջ, ապահովության համար շրջապատված ցանկապատերով: Պատերի ու պարիսպների մեջ սեղմված անցուղիներով վեր բարձրանալուց հետո, Պատրիարքարանի շենքի մուտքին Վեհափառ Հայրապետին դիմավորեց Տիեզերական Պատրիարքի փոխանորդ Ֆիլիպոս Միտրոպոլիտը և առաջնորդեց Նորին Սրբությանը Բարթոլոմեոս Ա Սրբազան Պատրիարքի ընդունելությունների դահլիճ:

Միջնադարյան հունական արվեստի բարձրաճաշակ ստեղծագործություններով կահավորված շքեղ Պատրիարքարանը թանգարան էր կարծես խեցեգործության, սրբապատկերների, գորգերի, կահույքի ու կերպարվեստի գլուխգործոցների՝ գրավիչ ու անկրկնելի:

Հայոց Կաթողիկոսի ու Հունաց Պատրիարքի սիրալիր ողջագուրումը վեհության, քրիստոնեական սիրո հույսիչ ու երանելի մի պատկեր էր ներկայացնում:

Ողջունելով Վեհափառ Հայրապետին, Նորին Սրբությունն ասաց.

«Ձերդ Սրբություն Կաթողիկոս-Պատրիարք Ամենայն Հայոց Գարեգին Ա, սիրելի Եղբայր ի Քրիստոս.

Քրիստոս հարյավ ի մեռելոց:

Հասկանալի և հատկապես խոր հուզումով կողջունենք Ձեզ մեր հոգևոր կենտրոնատեղիում անձնական բնակարանի մեջ, ուր ամեն օր կընթանանք Տիրոջ ուղիով և վեր կառաքենք մեր անդադար խնդրանքները Բարձրյալն Աստուծո: Կողջունենք Ձեր սիրելի և ազնվագույն Սրբությանը, որում կընկերանա մեր սիրելի Եղբայր Պատրիարքը և հովիվը դարավոր Հայկական Եկեղեցիի մեր քաղաքի մեջ: Բնական է, մեր Գերհարգելի Եղբայր, որ հիշենք այս պահուն այն լուրջ աշխատանքները, որ միասնաբար տարանք երկար տարիներ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի շրջանակներեն ներս և այլ էկումենիկ ժողովների ընթացքին:

Այդ փորձառությունները մեր միջև հաստատեցին անկեղծ և թանկագին բարեկամություն: Օրինակի համար, մենք մեծ հուզումով կհիշենք, թե որքան մենք մոտ էինք իրարու, երբ կարտահայտվեինք և կդիմագրավեինք քրիստոնեական հավատքի մեծ հարցերը, որոնցով կապրեինք քրիստոնյա Արևելքի մեջ, հաճախ մարտիրոսության պայմաններու մեջ: Այս ունի ավելի մեծ նշանակություն, նկատի ունենալով համաձայնությունը, որ եղավ մեր միջև, և այն իրողությունը, որ մենք նույն կարծիքը ունեինք բազմաթիվ կետերու մեջ: Հարաբերություններու

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ Կ.ՊՈԼՍԻ ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՖԵՆԵՐԻ ՀՈՒՆԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ ԲԱՐԹՈԼՈՄԵՈՍ Ա ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՊԱՀԻՆ

ընթացքին, որ կունենային քրիստոնյա Արևմուտքի ներկայացուցիչներում հետ, և այդ անկախ այն իրողությունից, որ մեր միջև դարեր ի վեր առկա մեր Վարդապետական ըմբռնումներն ու տարբերությունները ազդում են մեր վրա:

Հայտնի է, որ գործակցությունը, որ ստեղծվեց ուժեղ կերպով էկումենիկ շարժման դաշտում, որքան էլ որ այն առարկայական արժեք ունի, այսուհանդերձ մեծ նշանակություն ունի այն հարաբերությունների մեջ, որոնք օրեօր Աստուծո շնորհիվ ավելի կմոտեցնեն մեզ և ավելի էական կդառնան:

Ուստի փոխադարձ ճանաչումով և վստահությամբ մեր Եկեղեցիները իրար են հանդիպում այս օրերին, փնտրելու համար եղբայրական հարաբերություններ, եղբայրական երկխոսությունների միջոցով: Մեր երկու Եկեղեցիների պատրաստակամությունը և կամքը այս ուղղությամբ առկա իրականություն է:

Հետևաբար, աղոթում ենք, որ մինչև Ձեր վերադարձը Ձեր տունը, Ձերդ սիրելի Սրբությունը մնա մեր մեջ և հանդիպումներ ունենա բոլոր նրանց հետ, որոնց պիտի կամենաք հանդիպել: Այդ հանդիպումները պիտի լինեն պտղաբեր և ուրախալի Ձեզ և Ձեզ ընկերակցող պատվական խմբի համար:

Սուրբ համբույրով ողջագուրվում ենք Ձեզ հետ, հարության շնչով, մեռելներից հարություն առած մեր Տիրոջ փառքի մեջ, որ միշտ ներկա է մեր մեջ»:

Պատասխան ողջույնի խոսքում Վեհափառ Հայրապետն իր շնորհակալությունն արտահայտեց հրավերի համար և գոհունակություն՝ այս այցելության իրականացման առթիվ, ավելացնելով, թե քրիստոնյա աշխարհի ուշադրությանը պիտի արժանանա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Բարթոլոմեոս Պատրիարքի հանդիպումը: Ապա Վեհափառ Հայրապետը նշեց, որ տեսնելով երկու կրոնապետերի միջև գոյություն

ունեցող սիրալիր հարաբերությունները, մարդիկ էլ կսկսեն իրար հանդեպ սիրալիր վերաբերվել: Վեհափառ Հայրապետն իր խոսքում ասաց.

«Սիրեցյալ Հոգևոր Եղբայր Նորին Սրբություն,

Այս պահը սրտիս մեջ ու կյանքիս մեջ կարձանագրվի և կարձանագրվի նաև այն Եկեղեցիին մեջ, որում ես կծառայեմ իբր առաջին սպասավոր: Մենք տարբեր լեզուներով նույն հավատքին կծառայենք, և շնորհապարտ եմ Աստուծո, որ ինձի տվավ այս առիթը ըլլալու ձեր Էկումենիկ Պատրիարքարանին մեջ: Այս հանդիսավոր պահուն ես պիտի ուզեի հիշողությանս մեջ վերակենդանացնել այն առաջին հանդիպումը, զոր ունեցա Հունաց Էկումենիկ Պատրիարքի մը հետ, ձեր արժանավոր նախորդներեն Աթենագորաս Ա Պատրիարքին հետ: Ես այդ թվականին երիտասարդ հոգևորական մըն էի: Եվ չափազանց ազդված էի Եկեղեցիներու միության առնչությամբ իր քարոզչութենեն ու վճռակամութենեն:

Ես հիմա կուգամ Հայաստանեն, Ս. Էջմիածնեն, ուր այս առավոտ, երբ կանգնած էի վանական հոգևորականներուն դիմաց, մտածեցի Ս. Գրիգոր Լուսավորչի մասին, որ քրիստոնեությունը պետական կրոն հռչակեց ամբողջ Հայաստանի մեջ՝ միանալով մեր երկրի թագավորին: Եվ այդ պահուն իսկ ես զգացի, որ Ս. Գրիգոր Լուսավորիչ ինձի հետ էր իմ այս առաքելությանս մեջ:

Մենք փառք կուտանք Աստուծո, որ փոթորկոտ այնքան երկար տարիներե վերջ այսօր մենք կվայելենք Աստուծո այն մեծագույն պարգևը, զոր մենք ազատություն կկոչենք: Հայաստանի անկախ Հանրապետությունը այսօր իրողություն մը դարձած է: Ես կու գամ ազատ երկրե մը, ուր քրիստոնեությունը կծաղկի անգամ մը ևս, շնորհիվ ժողովուրդի մը անպարտելի կամքի ու փափագի:

Սրբազան Հայր, տա պահուն, երբ մենք այս պատմական հանդիպումը կունենանք Ուղղափառ Եկեղեցվո Էկումենիկ Պատրիարքարանի սրահին մեջ, կզգամ, որ աշխարհին ամեն կողմը միլիոնավոր մարդիկ կնային մեզի ու իրենք իրենց կըսեն. "Եթե մեր Առաջին Մառաղողները, մեր պետերը կրնան այսքան եղբայրանալ, կրնան միասնաբար մտածել, կրնան զգալ ու գործել միասին, ինչու ուրեմն մենք ալ չկարենանք նույնը ընել": Վաղը ես առիթը պիտի ունենամ իմ պաշտոնական խոսքը ուղղել ձեր եկեղեցիին մեջ: Այս մեկը հիմա պարզապես ինքնաբուխ մտածումներու արտահայտություն մըն է, որ պատասխան մըն է այն ազնիվ ոգիին, զոր ցույց տվիք այս առթիվ:

Կմաղթեմ, որ Ձեր Էկումենիկ Պատրիարքարանը, Ձեր ծառայություններով, առավել ևս ներշնչե այն հավատացյալները, որոնք քրիստոնեության այս պատմական հոգևոր կեդրոնին կնային իրենց ամբողջ հավատքով: Շնորհակալ եմ Ձեզի և Ձեզ շրջապատող բոլոր եպիսկոպոս-միտրոպոլիտներուն և կաղոթեմ, որ մեր ուղին ըլլա մերձեցման և քրիստոնեական միության ուղի մը, մեր մտածումներով, մեր խոսքերով ու գործերով»:

Հանդիպմանը ներկա էին հեռուստատեսության և վամուլի բազմաթիվ լրագրողներ:

Այս հանդիպումից հետո Հունաց Պատրիարքը Վեհափառ

Հայրապետին և իրեն ուղեկցող հոգևորականներին հրավիրեց Քոնրադ Հիլթըն հյուրանոց՝ ընթրիքի:

2. Պաշտոնականք

Մայիսի 9-ն է, 1996 թվական, Հինգշաբթի, ժամը 10.30: *Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետը՝ իր շքախմբով և հրավիրյալ եպիսկոպոսներով ուղևորվեց պատրիարքանիստ Հունաց Ս. Գեորգ եկեղեցի: Եկեղեցվո մուտքին Վեհափառ Հայրապետին ընդառաջ եկան վգեստավորյալ հույն քահանան՝ ավետարանով, և երկու բուրվառակիրներ, որոնք և խնկարկումով ու երգեցողությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսին առաջնորդեցին եկեղեցի: Թափորի մաս էին կազմում մեծ թվով հույն միտրոպոլիտներ ու քահանաներ, հայ և հույն հավատացյալներ: Որախ ու տոնական հնչեցին եկեղեցու զանգակները:*

Արարողապետը Խրիսոստոմոս Եփեսոսի միտրոպոլիտն էր, որ եկեղեցու ներսում հյուրերին դիմավորելուց հետո դիրք գրավեց եկեղեցու ձախակողմյան դասի՝ բարձրաստիճան հոգևորականի համար նախատեսված շքեղ գահին, իսկ աջ ու ձախ կողմերին տեղեր գրավեցին հույն միտրոպոլիտներն ու հոգևորականները: Դեմ առ դեմ, հյուր բարձրաստիճան հոգևորականի համար նախատեսված գահին տեղ գրավեց Վեհափառ Հայրապետը, աջ ու ահյակ ունենալով հայ հոգևորականներին: Երկու դասերի միջև կանգնած էին բազմաթիվ հավատացյալներ, լրագրողներ: Հունաց Պատրիարքարանի երաժշտապետերը հունարեն երգեցին "Քրիստոս հարյավ", ապա Հայրապետական գոհաբանական երգ, որի ընթացքին հիշեցին Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի անունը:

Արարողության ժամանակ եկեղեցու ավագ երեցը Վեհափառին մատուցեց արծաթյա խոշոր մի ձեռաց խաչ, որը համբուրելուց հետո, մինչ երաժշտապետերը երգում էին "Ս. Աստված", Վեհափառը երիցս խաչակնքեց ու օրհնեց դեմ-դիմաց կանգնած հույն հոգևորականներին ու ժողովրդին: Արարողությունը ավարտվեց: Հույն միտրոպոլիտն ու Վեհափառ Հայրապետը իջան գահերից ու ողջագուրվեցին: Ապա Վեհափառի գլխավորությամբ հայ հոգևորականները երգեցին "Ուրախ լեր սուրբ եկեղեցի", այնուհետև հաջորդեց Վեհափառի «Պահպանիչ»-ը, ուր հիշվեցին Հունաց Տիեզերական Պատրիարքը, Թուրքիո Հայոց Պատրիարքը, հոգևորականությունն ու համայն հավատացյալ քրիստոնյա ժողովուրդը, որից հետո Հայ և Հույն հոգևորականների թափորով Հայոց Կաթողիկոսն առաջնորդվեց Հունաց Պատրիարքարան, ուր շքեղ ընդունելություն էր նախապատրաստված:

Նախ ողջույնի պաշտոնական խոսք ասաց Տիեզերական Պատրիարքը: Նորին Սրբությունը գոհություն հայտնեց Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելության կապակցությամբ՝ նշելով, որ

Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

պիտի քննարկվեն այն կարևորագույն հարցերը, որոնք փոխադարձ հետաքրքրություն են ներկայացնում: Շեշտեց, որ այդ քննարկումները պիտի ամրապնդեն երկու Եկեղեցիների վստահելի եղբայրությունը, իսկ Վեհափառի առողջ կեցվածքը պիտի նպաստի կողմերի հաստատ երկխոսությանը: Սպա անդրադարձավ միջեկեղեցական համաշխարհային միության իրագործման հնարավորությանը: Նորին Սրբությունն իր խոսքում ասաց.

«Ձերդ Սրբություն և Ամենասիրելի Եղբայր Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոս, սրբազան եղբայրներ,

Մեզ համար հատուկ օրհնություն է և ճշմարիտ ուրախության պատճառ՝ մեր մեջ ունենալ Ձերդ Սրբությունը, սիրելի եղբայր, Կաթողիկոս Ամենայն Հայոց, ընկերակցությամբ Ձեր շքախմբին, նաև ընկերակցությամբ մեր շատ սիրելի եղբայր Գարեգին Բ Պատրիարքի՝ Կ. Պոլսի Հայ Եկեղեցու գլխավորի:

Պարզապես բնական է, որ այս օրհնյալ այցելությունը այս շրջանակում կլինի, և մենք կխոսենք եկեղեցական այն հարցերի շուրջ, որոնք կարևոր են և հետզհետե խորանում են երկուստեք, որը թույլ է տալիս հավատքի մեջ ինքն իրեն բացահայտող եղբայրությունը, որ գոյություն ունի մեր միջև, ավելի հստակ դառնա և ավելի իմաստալի:

Այն հանգամանքը, որ Ձերդ Սրբությունը և մեր համեստությունը անձամբ ներկա են այս երկխոսությանը, ոչ մի ձևով չպետք է նկատվի քաղաքավարություն կամ էթիկայի կանոն, այլապես մեր ներկայությունը պարզապես սիմվոլիկ կդառնա:

Մենք վստահ ենք, որ արտահայտում ենք նաև Ձերդ Սրբության համոզմունքը, երբ վստահեցնում ենք առկա եղբայրական հավատը, և երկուսիս

ցանկությունն է՝ կարևորել և նպաստել այս երկխոսության իրականացմանը: Նաև լավ գիտենք, որ մենք երկուսս ունեցանք Աստուծո առանձնաշնորհումն ու օրհնությունները՝ բազմաթիվ պաշտոնական առումներով զարգացնելու մի քանի երկկողմանի ու բազմակողմանի ժամանակակից էկումենիկ երկխոսություններ:

Հայտնի է, որ երբեք մենք իրավունք չունենք գործել որպես պարզ "բյուրոկրատներ": Եթե Եկեղեցու կառավարումը ուղղակի և օրգանական շարունակությունը չէ Աստուծո հոգևոր պաշտումին և անընդհատ աղոթքի, ապա դա համապատասխան էներգիա չէ հավատքի և, հետևաբար, չի կարող խոստովանություն կամ վկայություն լինել:

Այս մտածումներով և անկեղծ զգացումներով, ներկայությամբ Աստուծո միատեղ ջանքի, և այս Ջատկական մթնոլորտում, ներկայությամբ մեր բոլորի հարուցյալ Տիրոջ, հուսով ենք և աղոթում ենք, որ Մխիթարիչ Ս. Հոգին միշտ մեզ հետ լինի և զորացնի մեզ՝ մեր ազնիվ երկխոսությունների ու որոշումների ողջ ընթացքին»:

Սպա անգլերենով պատասխան ողջույնի խոսք ասաց Վեհափառ Հայրապետը.

«Մեծապես ուրախ եմ և գոհություն ու փառք կու տամ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի, որ ինձի շնորհեց, ինձի ընկերակից պատվիրակության անդամներով, հանդիպում ունենալ Ձերդ Սրբության հետ, վերանորոգելու մեր հոգևոր հաղորդակցությունը և վերազորացնելու մեր եղբայրացումը ի Քրիստոս, որ Ինքյուր Մարդեղությամբը եղավ եղբայրը բոլորին:

Ձերդ Սրբությանը կբերեմ միլիոնավոր հայ ժողովրդի զավակներուն սերը, խոր հարգանքը և աղոթքը, որոնք կապրին ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի և կվայելեն մեր ժողովրդի, որպես Քրիստոնյա ազգ և պետություն, ծննդավայրին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսության հոգևոր խնամքը: Քրիստոնեական կյանքի, հավատքի, վկայության տասնևյոթ դարերը այսօր կիտանան այս եղբայրական ողջագուրման մեջ, որ այսօր գիս կկապե Ձերդ Սրբության, Օրթոդոքս Եկեղեցվո նախապատիվ առաջին Աթոռին՝ Տիեզերական Պատրիարքության Գահուն տված իմ առաջին այցելությամբս: Այս այցելությամբս Ձերդ Սրբության հետ կբաժնեմ բոլոր Օրթոդոքս Եկեղեցիներու ծիսական ավանդությանց մեջ մեծարված մեր Հավատո Հոր՝ Ս. Գրիգոր Լուսավորչի հավատքեն մասնիկ մը:

Նախ կուզեմ հայտնել Ձերդ Սրբության իմ խորին և սրտագին շնորհակալությունները այն հրավերին համար, որով առիթ ընծայվեցավ վերանորոգելու բազմադարյան հարաբերությունները Տիեզերական Պատրիարքության և Հայ Եկեղեցվո, Ամենայն Հայոց Կաթողիկոսության միջև: Ուրախ ենք՝ տեսնելով թե Ձերդ Սրբությունը և Տիեզերական Պատրիարքությունը սերտորեն կգործակցի Պոլսո Հայոց մեր Պատրիարքության հետ:

Արդարև, այս պահը պատմական կարևորություն ունի Հայ Եկեղեցվո համար: Այսօր մենք հանդիպում ունեցանք Կ. Պոլսո մեջ, ուր անցյալ դարերու

ընթացքին Տիեզերական Պատրիարքության Գահակալներ ու Ամենայն Հայոց Կաթողիկոսներ հանդիպած են իրարու, հաճախ, երբ մեր երկիրներն ու Եկեղեցիները դժվարին պայմաններու տակ կգտնվեին: Այսպիսի հանդիպումներու վերջինը տեղի ունեցավ ճիշտ երեսունհինգ տարիներ առաջ, Ձեր և իմ երջանկահիշատակ նախորդներուն՝ Աթենագորաս Ա-ի և Վազգեն Ա-ի միջև: Այսօր երկուքն ալ կգտնվին իրենց երկնային կալքերուն մեջ:

Առանց երթալու նախկին դարերուն, ես կուզեմ առանձինն անդրադառնալ Տիեզերական Պատրիարքության և Հայ Եկեղեցվո միջև տեղի ունեցած ամենակարևոր երկխոսության, որ երկու Եկեղեցիներու հարաբերությանց պատմության մեջ ոսկյա էջ մը կկազմե: Այդ պատահեցավ ԺԲ դարուն, շարք մը թղթակցություններով, և Քրիստոսաբանական վարդապետության մասին աստվածաբանական խոսակցություններ կատարելու և պատմության ընթացքին գոյացած թյուրիմացությունները փարատելու տեսլականով օժտված պատվիրակությանց փոխադարձ այցելություններով, հանգելու համար անկեղծ իրարհասկացողության:

Այստեղ և այսօր ես կուզեմ հիշել Ձեր նախորդներեն մին՝ Միքայել Գ Պատրիարքը, և իմ նախորդներես Սուրբ Ներսես Օնորհալին, որ ԺԲ դարու վախճանին մոտ, Մանվել Ա Կոմնենոս կայսեր շրջանին, վարեցին շատ օգտակար և լուսաբանիչ երկխոսություններ, հաստատելով այն ճշմարտությունը, թե երկու Եկեղեցիներն ալ ճշմարտապես կդավանեին նույն հավատքը՝ Քրիստոսի անձը ճանչնալով որպես կատարյալ Աստված և կատարյալ մարդ, աստվածային և մարդկային բնություններով, միացյալ և ոչ բաժանյալ: Հակառակ փոխադարձ ճիգերուն, որոնք կձգտեին երկու Եկեղեցիներու լման հաղորդությունը ապահովելու, կարելի չեղավ վերջնական եզրակացության հանգիլ հաջորդող պատմական դեպքերու և պայմաններու բերմամբ:

Հաջորդող դարերը Հույն և Հայ ժողովուրդներու համար եղան տագնապի շրջաններ: Մենք հաճախ դեմ-հանդիման եկանք նույն պայմաններուն հետ, և մեր ճակատագրերը իրարու խառնվեցան: Մենք շարունակեցինք զարգացնել սերտ գործակցությունը և բարեկամական հարաբերությունները: Գոհություն Աստուծո, քանզի 20-րդ դարու երկրորդ կեսին էքումենիք ոգին եղավ համաքրիստոնեական կյանքի և վկայության ամենակարևոր երևույթներեն մեկը, ներառյալ Հույն Օրթոդոքս և Արևելյան Օրթոդոքս Եկեղեցիներու մեր երկու ընտանիքները, շարք մը լուրջ և հիմնական աստվածաբանական երկխոսություններ իրագործվեցին, մասնավորաբար վերջին երեք տասնամյակներու ընթացքին:

Հայ Եկեղեցին իրերհասկացողության նպատակավ կատարված բոլոր երկխոսությանց մեջ գործոն դեր ստանձնեց: Բազում թյուրիմացություններ փարատվեցան, և մեր առջև բացվեցան նոր հորիզոններ՝ դեպի մեր Եկեղեցիներու ներքին միությունը:

Հետևելով մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրամայականին (Հովհ. ԺԷ), պարտավոր ենք քաջալերել միության տեսլականը, շարունակելով և խորացնելով մեր երկխոսությունները և մեր ժողովուրդներուն մեջ արթնցնելով միության հանդեպ հետաքրքրություն և փափաք, այնպես, որ միությունը կարենա

վերակերտվիլ Քրիստոսի խորհրդավոր մարմնին մեջ, որ է Մեկ Եկեղեցին, ծառայելու համար նույն և մեկ մարդկության և ի սեր մեր հասարակաց վկայության ազդության և վավերականության այսօրվան աշխարհի մեջ:

Սիրելյալ եղբայր ի Քրիստոս,

Հայ Եկեղեցվո և ժողովուրդին համար ներկա ժամանակները մեր դարավոր պատմության վճռական շրջաններեն մին է: Այսօր մենք, Հայերս, գոհություն կհայտնենք Աստուծո, որ մեր Հայրենիքը՝ Հայաստանը, Սովետական 70-ամյա ամբողջատիրական վարչակարգեն հետո, վերստին տիրացած է իր անկախության և ազատության: Նոր անկախ Հայաստանի Հանրապետությունը ծնավ: Այժմ կանցնինք հոգևոր և ազգային վերածնունդի և վերականգնումի վճռական շրջանե մը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Հայաստանի և ամբողջ աշխարհի տարածքին ապրող Հայոց հետ կոչված է նոր առաքելության՝ ապահովելու համար հոգևոր և բարոյական պահպանումը մեր ժողովուրդին, որ վերջին յոթ տասնամյակներուն փորձառությունը ունեցավ պարտադրված անաստված դրության մը նեղությունները ապրելու:

Ամբողջ աշխարհի մեր բոլոր Քրիստոնյա եղբայրներուն և քույրերուն աջակցությունը մեզի համար կարևոր են որպես հանապազօրյա հաց: Այժմ, երբ երկրորդ հազարամյակը իր մայրամուտին է հասեր, մենք, Հայերս, երբ կպատրաստվինք միանալ մեր Քրիստոնյա բարեկամներուն, տոնախմբելու մարդկային պատմության այս անկյունադարձը, մենք ունինք նաև հատուկ պարտավորություն նշելու Քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակը: Մենք Հայ Եկեղեցվո նվիրապետական Աթոռներուն՝ Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի և Պոլսո Պատրիարքությանց հետ միատեղ, զբաղված ենք մեր Եկեղեցվո պաշտոնական հիմնադրության 17-րդ դարադարձը դիմավորելու: Արդարև այս տոնակատարությունը կանդրանցնի Հայ Եկեղեցվո սահմանները: Ան Տիեզերական Եկեղեցվո ամբողջացուցիչ և անբաժան մեկ մասնիկն է:

Մենք կնայինք այս մեծ և անանխընթաց առիթին և անոր մեջ չենք տեսներ միայն պատճառ մը լոկ անցյալին մեծարանք մատուցանելու, այլ կնկատենք զայն ոսկյա առիթ մը, որ պետք է դառնա մղիչ ուժ՝ վերանորոգելու մեր երկրում և ի սփյուռս աշխարհի մեր ժողովուրդին մեջ Քրիստոնեական հավատքը: Ինչպես ըսած եմ այլուր, 1700-ամյակը պիտի զգենու իր իրավ կարևորությունը և արժեքը, եթե ընկալվի և ապրվի որպես տեսակ մը նոր Պենտեկոստե (Հոգեգալուստ) մեր Եկեղեցվո և ազգին համար:

Ինչպես Պենտեկոստեին բոլոր առաքյալները միատեղ էին, մեր անկեղծ հույսն ու համոզումն է, որ մեր քույր Եկեղեցիները մեզի հետ կըլլան զորացնելու և հարստացնելու մեզ, իրենց միասնականությամբ: Կուզեմ խնդրել Ձերդ Սրբությունեն և Ձեր Սուրբ Սինոտի անդամներեն, Պոլսո մեջ և աշխարհի տարածքին վրա ծառայող Ձեր հոգևորականներեն, զորավիգ կանգնելու մեր սրտագին փափագին և համեստ ճիգին մեջ Աստուծո առջև կենալու և բանալու մեր սրտերն ու մտքերը, մեր կյանքը և գործը Անոր, որ է մեր Երկնավոր Հայրը, Իր Միածին

Որդին և Սուրբ Հոգին, հեղու մեր վրա Ամենասուրբ Երրորդության շնորհքները, վերանորոգելու համար մեր հավատարմությունը՝ նկատմամբ Իրեն, որ միշտ «հավատարիմ» է մեզի (Ա Կորնթ. Ժ 13) : Ասոր համար էր, որ մեզի հրամայեց «մնալ կապված Տիրոջը հոժար սրտով» (Գործք ԺԱ 23), և խոստացավ «ամրացնել մեզ և պահել չարեն» (Բ Թեսղ. Գ 3) և մեզի հետ ըլլալ «միշտ, մինչև աշխարհի կատարածը» (Մատթ. ԻԸ 20):

Փառք Իր անվան հավիտյանս հավիտենից»:

Ելույթներից հետո տեղի ունեցավ հուշանվերների փոխանակում: Հունաց Պատրիարքը Վեհափառին նվիրեց թանկարժեք քարերով զարդարված արծաթյա մի պանակ՝ բարձրագույն իշխանության խորհրդանիշ երկգլխանի արծվի պատկերով, եպիսկոպոսական մի պանակ՝ Ասողիկ Սրբազանին, և լանջախաչեր՝ Վեհափառի շքախմբի վարդապետներին: Փոխադարձելով նվերները, Հայոց Հայրապետը Պատրիարքին նվիրեց ոսկեզարդ գլխիկով մի ասսա և փայտաքանդակ խաչքար, իսկ ներկաներին՝ հուշամեդալներ ու հուշանվերներ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատկերներով: Պաշտոնական այս արարողության ավարտից հետո Հայ Առաքելական և Հույն Ուղղափառ Եկեղեցիների պատվիրակությունները դոնփակ տեսակցություն ունեցան Բարթոլոմեոս Ա Պատրիարքի աշխատասենյակում:

Ապա կազմակերպվեցին այցելություններ Կ. Պոլսի պատմական հուշարձաններ, Բյուզանդական շրջանից մնացած վանքեր ու եկեղեցիներ, որոնց մեծ մասը, դժբախտաբար, ժամանակին մզկիթների են վերածվել, հարթաքանդակներն ու գրությունները քերվել են պատերից, սրբապատկեր-որմնանկարները սվաղվել:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԿԽՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Վեհափառ Հայրապետը, իր շքախմբի անդամներից Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրադյանի, Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանի, Գյուտ արքեպիսկոպոս Նագգաշյանի ընկերակցությամբ, առաջնորդվեց Բարթոլոմեոս Ա Սրբազան Պատրիարքի նստավայրը, ուր երկժամյա մի հանդիպում տեղի ունեցավ՝ քննարկելու համար Արևելյան քաղկեդոնական և ոչ քաղկեդոնական Եկեղեցիների միջև վերջին հիսուն տարիների ընթացքում տեղի ունեցած աստվածաբանական-քրիստոսաբանական խոսակցությունների արդյունքները:

Հունաց Պատրիարքի հետ հանդիպմանը մասնակցում էին նաև Եփեսոսի Խրիսոստոմոս միտրոպոլիտը, Դամասկինոս միտրոպոլիտը, որը ժամանել էր Ժնևից՝ հատուկ այս ժողովին մասնակցելու համար, որպես աստվածաբանական երկխոսությունների հանձնախմբի երկու անդամներից մեկը: Երկու հոգևոր պետերը իրենց ընկերակցող

պատվիրակները ընդհանուր հաշվեկշռի և զոհացումի ենթարկեցին Սարուսի (Դանիա), Պրիստոլի (Անգլիա), Ժնևի (Շվեյցարիա), Ադիս Աբեբայի (Եթովպիա), Կահիրեի (Եգիպտոս) հանդիպումների աստվածաբանական խոսակցությունների եզրակացությունները:

Նրանք հայտարարեցին, որ մեծ առաքընթաց է արձանագրվել Քրիստոսի անձի և վարդապետության ճիշտ ըմբռնման մարզում: Նրանք հանձնարարեցին, որ երկու Եկեղեցիների ներկայացուցիչներից կազմված հանձնախումբը շարունակի իր առաքելությունը և ձեռք բերված արդյունքների մասին տեղեկացնի բոլոր Եկեղեցիների հոգևոր պետերին նրանց հետ հանդիպելով՝ եկեղեցական միության ամրացման և հաղորդության վերստեղծման նպատակով:

ՆՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՒՅՆ ՈԳՈՎ

Նույն օրը, երեկոյան ժամը 19.00-ին, Բարթոլոմեոս Պատրիարքը ընդունելություն կազմակերպեց Հունաց Պատրիարքարանի դահլիճում՝ ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Հավաքույթին ներկա էին Թուրքիո Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին Ա Գալանճյանը, Պատրիարքական փոխանորդ Գերաշնորհ Տ. Շահան Արքեպս. Սվաճյանը, Կրոնական ժողովի ատենապետ Գերաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպս. Մութաֆյանը, Երուսաղեմի Պատրիարքության լուսարարապետ Գերաշնորհ Տ. Դավիթ Արքեպս. Սահակյանը, Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գյուտ Արքեպս. Նազգաշյանը, Ռումինիայի և Բուլղարիայի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրայր Արքեպս. Մարտիկյանը և Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամները: Հունաց կողմից ներկա էին 24 Միտրոպոլիտներ և հոգևորականներ, Սինոդի անդամներ: Ընդունելությանը ներկա էին նաև քույր Եկեղեցիների ու հարանվանությունների ներկայացուցիչներ, տարբեր երկրների դիվանագետներ, հյուպատոսներ:

Նախ ելույթ ունեցավ Հունաց Պատրիարքը, որ նշեց, թե հակառակ մի շարք տարբերությունների, արևելյան Եկեղեցիների ներկայացուցիչները վերջին տարիներին ավելի են մերձենում ու համախմբվում՝ մեկ Աստծո հավատի հիմքի վրա. «Քրիստոսի Եղբայրությունը ոչ թե բաժանում, այլ միանալ է խորհրդանշում, քանզի Քրիստոս խաչվեց բովանդակ մարդկության համար»: Ապա Նորին Սրբությունը մասնավորաբար շեշտեց, որ արևելյան Եկեղեցիները հենվում են դարավոր մշակույթի վրա, որը չի անտեսվում Արևմտյան աշխարհի կողմից ևս: Աղոթեց, որ Աստված ուժ տա մերօրյա կրոնավորներին, ի մասնավորի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա-ին, որպեսզի հնարավոր լինի համատեղ աշխատել համայն մարդկության խաղաղության ու բարօրության համար:

Քիչ ավելի ուշ խոսք առավ նաև Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը նախ ողջունեց Հունաց Պատրիարքին ու բոլոր ներկաներին: Նա ասաց, որ ինքն ու Պոլսո Հայոց Պատրիարքը եկել են արտահայտելու այն խոր սերն ու հարգանքը, որ Հայ Առաքելական Եկեղեցին ունի Հույն Ուղղափառ Եկեղեցու նկատմամբ: Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ եթե կրոնապետերը միասնության մեջ լինեն, ապա կարող են ավելի արդարությամբ քարոզել ճշմարիտ եղբայրության և փոխադարձ կորավիգության անհրաժեշտությունը: Վեհափառն ավելացրեց, որ Աստուծո հանդեպ սերը նշանակում է սեր ունենալ մարդկանց հանդեպ, որ նորից ծաղկում ապրող էկումենիկ շարժման արտահայտություններից մեկն է: Ապա Վեհափառը ողջունեց ներկաներին, աղոթելով առ Աստված աշխարհի խաղաղության համար: Պաշտոնական մասն ավարտված էր, և Վեհափառ Հայրապետն իր շքախմբով վերադարձավ հյուրանոց:

Այս այցելության ընթացքում Կ. Պոլսի ուստիկանությունը, ուստիկանապետի հրապարակային գլխավորությամբ տնապես ուղեկցում էին Վեհափառին և պատշաճ կարգ ու կանոն պահպանում ինչպես հանրային հավաքատեղիներում, ուր կանգ էր առնում Վեհափառը, այնպես էլ ճանապարհներին:

"ՀԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՆՉՆ Է, ՈՐ ԿՁԳԱՄ ԱՊՐՈՂՆԵՐՈՒԴ ՄԵՋ"

Մայիսի 10-ին, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով, Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության ու հրավիրյալ Արքեպիսկոպոսների ուղեկցությամբ ու առաջնորդությամբ Եփեսոսի Խրիսոստոմոս Միտրոպոլիտի, այցելեց Այվանսարայի պատմական հունական եկեղեցի, որն այժմ թանգարանային նշանակություն ունի և պատկանում է Թուրքական կառավարությանը: Հաջորդ այցելությունը եղավ Գարիեյի հունաց եկեղեցի, որի բակում է գտնվում Հունաց Պատրիարքների գերեզմանատունը: Եկեղեցում կարճ հոգեհանգստյան արարողությունից հետո Վեհափառ Հայրապետն այցելեց Սթենագորաս և Դիմիտրիոս Պատրիարքների դամբարաններ և ծաղկեպսակ կետեղեց՝ "Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից" մակագրությամբ, ձոնելով նաև մի ուղերձ Պատրիարքների հիշատակին, ուր ընդգծեց հատկապես հունաց ու հայոց գերեզմանատների դրացիությունը՝ շեշտելով դրացիության ու միասնության գաղափարը:

***

Ճիշտ Գարիեյի դիմաց է գտնվում Պալըքլի հայոց գերեզմանատունը, ուր Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Պոլսահայ քահանայից դասը, Սամաթիայի Թաղային խորհրդի Ս. Փրկիչ ազգային

հիվանդանոցի անդամները, պաշտոնյաներ ու ազգային գործիչներ: Գերեզմանատան դարպասից մինչև Ս. Սարգիս մատուռն ընկած ճանապարհը ծածկված էր գորգերով: Մատուռում կարճ աղոթքից հետո Վեհափառ Հայրապետը հետևյալ խոսքն ուղղեց ներկաներին.

«Պոլսո ներկայիս հայերը տեսնելե առաջ ինձի կտրվի այս պատեհությունը՝ հարգանք ընծայելու և աղոթք մատուցելու հիշատակին անոնց, որոնք երեկ կային և այսօր չկան, բայց միշտ պիտի ըլլան: Միշտ պիտի ըլլան մեր մեջ, որովհետև ննջեցելոց հիշատակը արմատներե սնունդ առնելու երևույթ է ժողովուրդի մը համար: Ինչպես ըսված է մեծ պատմաբանի մը կողմե, ամբողջ կայսրություն մը խորտակվեցավ, որովհետև ապրողները մոռցան մեռելները: Ան, որ կմոռնա իր ննջեցյալը, կփրթի իր անցյալեն և կմնանի այն ճյուղին, որ կտրված է ծառեն:

Այսօր եկա այստեղ մեր սիրելի Հույն Ողղափառ Եկեղեցվո տված այցելությանս գրեթե ավարտին և երկու Եկեղեցիներու ու երկու գերեզմանատներու այս դրացիությունը ինձի առիթ տվավ, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու անձնապես, հարգանք ընծայեմ ձեր այն սերունդին, որ ձեզի նման արևը կտեսներ, օդը կշնչեր և հետո կյանքին օրենքին համաձայն դադրեցավ այդ շունչը առնելե և այդ արևը տեսնելե: Անոնք մեզի փոխանցեցին կյանքը ապրելու պարտականությունը և մենք մեր կյանքով պետք է արժևորենք իրենց հիշատակը: Ասոր համար է, որ ես գերեզմանատան մեջ մահվան հոտը չեմ առներ: Այս խոսքս գոնե բնավ մի՛ մոռնաք. գերեզմանատան մեջ մահվան հոտը չէ, որ կառնեմ, այլ կզգամ հարության շունչը:

Կողջունեմ ձեզ և կմաղթեմ, որ այն հարգանքը, զոր ունիք ձեր ննջեցյալներուն հանդեպ, մնա կենդանի պոլսահայ մեր ժողովուրդին ու մեր երիտասարդ սերունդին մեջ: Ապրի՛ք անոր համար, որ գիտեք այսպես հարգել ձեր մեռելները, որոնք երկինքեն կօրհնեն ձեզ:

Ուրախ եմ, որ մեր Պատրիարքարանը առիթ ստեղծեց, որպեսզի այսպես պատուհան մը ունենամ բացվելու համար դեպի մեր ժողովուրդը՝ մինչև վաղը: Վաղը այլևս ձեզի հետ եմ: Ձեզի հետ պիտի ըլլամ ամբողջությամբ երեք-չորս օրեր և այսօրվան մեր հանդիպումը ընդունեցեք իբրև նախաճաշակ մը՝ մեր գալիք հանդիպումներուն: Այնպիսի նախաճաշակ մը, որ ննջեցյալներու հավիտենության շունչով ներդրոշմված է: Աստված պահե ձեզ բոլորդ այս հավատքին մեջ, ամեն»:

Վեհափառ Հայրապետի այս հակիրճ խոսքից առնված "Գերեզմանատան մեջ մահվան հոտը չէ, որ կառնեմ, այլ հարության շունչն է, որ կզգամ ապրողներուդ մեջ" իմաստալից տողը հաջորդ օրը դարձավ տեղական հայկական թերթերի առաջնորդող հոդվածների խորագիրը:

Սպա Վեհափառ Հայրապետը շրջեց գերեզմանոցում, ծաղկեպսակներ կետեղեց մեծատաղանդ վաղամեռիկ բանաստեղծներ Միսաք Մեծարենցի ու Կարպիս Ճանճիկյանի շիրիմներին և հոգեհանգստյան պաշտոն կատարեց գերեզմանատան կենտրոնում

կառուցված ընդհանուր նահատակաց հուշարձանի առջև: Հուսիչ էր նաև նույն գերեկվանատանը Վեհափառ Հայրապետի այցելությունը 15-րդ դարի Մեծի Տանն Կիլիկիո Թորոս Կաթողիկոսի դամբարանին: Հոգեհանգստյան պաշտոնից հետո Վեհափառ Հայրապետը հուզումով ու արտասվալից աչքերով դարձավ ներկաներին և ասաց.

«Այստեղ, Պոլսո մեջ գիտեի, թե մենք ունենք Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Ջուղայեցիի դամբարանը: Ես արդեն հառաջիկա օրերուն հարգանք պիտի ընծայեմ անոր հիշատակին: Հարգանք պիտի ընծայեմ նաև Պոլսո Պատրիարքներին՝ Գարեգին Խալատուրյան և Շնորհք Գալուստյան Պատրիարքներուն: Բայց այսօր այնպես զուգադիպեցավ, որ պատմական դեմքի մը առջև կգտնվինք: Եվ այդ պատմական դեմքը իմ նախկին Կաթողիկոսության Աթոռիս նախորդներեն մեկը եղած է, որպես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս: Կյանքիս մեջ երբ հիմնական փոփոխություն մը կատարվեցավ և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Աթոռեն ես անցա Ամենայն Հայոց Կաթողիկոսության ծանրագույն և ծայրագույն պարտականության, փառք կուտամ Աստուծո, որ կգտնվիմ իմ Կիլիկյան Աթոռի նախորդներեն Թորոս Կաթողիկոսի շիրմին առջև:

Այս առիթով հարգանք կընծայեմ բոլոր այն Կաթողիկոսներուն, որոնք Կիլիկիո տարապայմանորեն դժվարին պայմաններուն տակ մեր Եկեղեցին առաջնորդեցին 15-րդ դարեն մինչև 20-րդ դար և ապա շարունակեցին ծառայել մեր նույն և մեկ Եկեղեցիին՝ Անթիլիասի մեջ, ի Լիբանան: Թող Աստված ծաղկյալ պահե Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը և առավել ևս սերտացնե այն գործակցության ուղին, որուն մեջ մտած ենք որպես մեկ և ամբողջական Եկեղեցի:

Աստված ընջեցյալներուն հիշատակը թող անմահ պահե երկինքին մեջ և ապրողներուն ուժ և իմաստություն տա, որպեսզի ապրողները շարունակեն առավել փառքով տանել այն լուծը, որ իրենց ուսերուն վրա դրված է: Թող Աստված օրհնե ձեզ բոլորդ ձեր հավատարմության համար»:

***

Նույն օրը, երեկոյան, Հունաց Պատրիարքը փոխադարձ այցելություն տվեց Վեհափառ Հայրապետին: Հյուրանոցում, Վեհափառի առանձնասենյակում, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ Բարթոլոմեոս Ա-ին և իր շքախմբին դիմավորեցին Թուրքիայի Հայոց Պատրիարքը՝ Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆյանի հետ միասին, Կիլիկյան Աթոռի և Երուսաղեմի Հայոց Պատրիարքության ներկայացուցիչ Սրբազանները, Փարիզի և Ռումինիայի առաջնորդները:

Նախ երկու հովվապետերը հուզանվերներ փոխանակեցին, ապա Բարթոլոմեոս Պատրիարքը թուրքերենով հայտարարություններ արեց տեղական մամուլին: Նորին Սրբությունը նախ անդրադարձավ Հայ Առաքելական և Հույն Ուղղափառ Եկեղեցիների հարաբերություններին, ապա դիտել տվեց, թե եղբայրական վաղեմի հարաբերություններ գոյություն ունեն երկու Եկեղեցիների միջև, իսկ համաքրիստոնեական հարցերի վերաբերյալ Բարթոլոմեոս Ա-ն ասաց, որ լինելով հոգևո-

րականներ, իրենք պարտավոր են աշխատելու այդ ուղղությամբ: "Բացի համաքրիստոնեական միությունից, - շարունակեց Բարթոլոմեոս Պատրիարքը, - եթե Տերը կամենա, մի օր կարող է իրականանալ նաև միաստվածյան բոլոր կրոնների միությունը":

Անդրադառնալով համաքրիստոնեական միության գործընթացին, Հունաց Պատրիարքը շեշտեց, որ աշխատանքները երբեմն ընթանում են դյուրությամբ, իսկ երբեմն էլ ծագում են դժվարություններ, որոնցից գլխավորը Վատիկանի դիրքորոշումն է: Համաքրիստոնեական միությունը պիտի լինի ո՛չ թե որևէ մեկ մասնավոր Եկեղեցու, այլ՝ Տիրոջ՝ Հիսուսի հովանու ներքո: Տեղական Եկեղեցիները պիտի շարունակեն իրենց ապդեցությունը իրենց շրջանակներում, իսկ Ֆեների Հունաց Պատրիարքարանը պիտի շարունակի ունենալ նախապատվություն օրթոդոքս աշխարհում:

Տիեզերական Պատրիարքն անդրադարձավ նաև Ֆեների և Մոսկվայի Պատրիարքությունների միջև ծագած հարցերին և ասաց, որ վերջերս իրարահաջորդ բանակցություններ են տեղի ունեցել Ժնևում, և այդ հարցերը լուծման հունի մեջ են գտնվում: Նա ավելացրեց, որ իր Եկեղեցին միշտ կողմնակից է երկխոսության և ներկայիս սպասում են Մոսկվայի Պատրիարքության Սինոդի ժողովի արդյունքներին, ուր որոշումներ պիտի առնվեն երկու Պատրիարքությունների միջև առկա հարցերի վերաբերյալ:

Հետ այսու դոնփակ շարունակվեց այս քաղաքավարական տեսակցությունը, որի ընթացքին Վեհափառ Հայրապետը հյուրասիրություն կազմակերպեց՝ ի պատիվ Տիեզերական Պատրիարքի:

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԻՇԽԱՆԱՑ ԿՂԶԻՆԵՐ

Հաջորդ օրը, առավոտյան, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով, հանդիսություններին ներկա սրբազանների հետ միասին, Հունաց Պատրիարքարանի փոքրիկ ու հարմարավետ կբոսանավով ճամփորդության մեկնեց Իշխանաց կղզիներ: Ճամփորդությունն առաջնորդում էր Տիեզերական Պատրիարքն անձամբ՝ սիրալիրությամբ անհրաժեշտ բացատրություններ տալով ծովում աջ ու ահյակ երևացող կղզիների վերաբերյալ:

Սակայն աջ կողմում Եասսը քարաժայռ կղզին է, ուր ըստ ավանդության, 9 տարի, Վաղես կայսեր հրամանով, բանտարկված մնաց Սուրբ Հայրապետը Հայոց՝ Ներսես Մեծը: Անմարդաբնակ էր կղզին այն ժամանակ, անմարդաբնակ է այն նաև այսօր: Տխուր է կղզին, ծածկված հատ ու կենտ ծառերով: Այստեղ Ներսես Մեծի ոտնահետքերը կան, վրմունջն ու աղոթքը՝ անտարբեր ալիքներին բախվող: Երկար ու երկար կղզուն էր նայում այսօրվա Հայոց Հայրապետը, որ կանգնել էր ալիքների վրա առավել վեր ու վար անող

նավակի նավախելին և կարծեք չէր լսում հոգևորականների կգուշացնող կանչերը:

"Հայրապետ սուրբ և անբիծ...", սկսեց երգել Վեհափառ Հայրապետը, և նրան ձայնակցեցին մյուս հոգևորականները: Ապա Վեհափառն օրհնեց կղզին՝ խնդրելով Մեծն Ներսես Հայրապետի բարեխոսությունն առ Քրիստոս՝ վասն ապգիս Հայոց:

Հաջորդ կղզին, ուր կանգ առավ կբոսանավը, Խալքիի (այժմ՝ Հեյպելե) կղզին էր: Այդտեղ է գտնվում Այա Թրիատա (Ս. Երրորդություն) հունական մայրավանքը: Մինչև 1971 թ. այստեղ Հունաց Պատրիարքության ճեմարանն էր՝ 150 ուսանողներով: Տխուր տեսք ուներ ճեմարանը: Դատարկ էին լսարանները, իսկ գրադարանի կրոնական, փիլիսոփայական, կանոնական արվեստների վերաբերյալ 60.000 թանկարժեք գրքերը պահպանվում են իրենց տեղերում, սակայն, ավա՜ղ, չկան ընթերցասեր վանական ուսանողները: Տիեզերական Պատրիարքը հույս ունի, որ բանակցությունները թուրքական կառավարության հետ դրական արդյունք կտան և կվերաբացվի ճեմարանը:

Բաժանվելով Խալքիից, կբոսանավն ուղևորվեց դեպի Գնալը կղզի, ուր նախ Վեհափառ Հայրապետն ու Հունաց Պատրիարքը այցելեցին Հունաց Մետամորֆոսիս վանք: Վանքի բակում են թաղված Լևոն Հայկազն Բյուզանդական կայսրը, Ռոմենոս Դիոգենեսը ու Վարդան զորավարները: Կղզին կոչվում է նաև հայկական կղզի: Այստեղ է գտնվում 1857 թ. Հակոբոս Սերովբյան Պատրիարքի օրոք կառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, այս կղզում հաճախակի էին լինում Օրմանյան, Դուրյան, Եղիայան, Նարոյան, Գարեգին Ա և Շնորհք Պատրիարքները, Կոմիտաս վարդապետը, Թերլեմեզյանը, Սվետիք Իսահակյանը, Գրիգոր Զոհրապը, Արշակ Ալպոյաճյանը և ուրիշներ: Կղզում այսօր էլ հայեր կան բնակվող, իսկ ամառներն այն դառնում է բազմահազար պոլսահայության հանգստավայրը:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում հավաքված հայությունը ցնծությամբ ողջունեց Վեհափառ Հայրապետին: "Շուտով ձեզ հետ կլինեմ ամբողջովին"-եկեղեցում կարճ աղոթքից հետո իր ողջույնի խոսքում ասաց Վեհափառը: Որքա՜ն անհամբեր էր սպասում Պոլսահայությունը Տիեզերական Պատրիարքի ծրագրի ավարտին, որպեսզի կարողանար ամբողջովին լինել իր Կաթողիկոսի հետ...

Կղզիներ կատարված շրջապտույտը Հունաց Պատրիարքության ծրագրի վերջին կետն էր: Եվ երբ կբոսանավը Կ. Պոլիս վերադարձավ, սիրալիր ողջագուրումով բաժանվեցին իրարից երկու Հայրապետները՝ կրկին ու կրկին հանդիպելու հաստատ որոշմամբ:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՆՈՐՀԱԲԵՐ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԱԹՈՌԻՆ ԵՎ ՍՏԱՄԲՈՒԼԱՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ

1. "ԲԱՐԻ ԵԿԱՐ, ՎԵՀԱՓԱՌ"

Հունաց Պատրիարքության հետ կապված ծրագրի ավարտից անմիջապես հետո, նույն օրը, Մայիսի 11-ին, ժամը 16.00-ին, Հայոց Պատրիարքության շքախումբը Վեհափառ Հայրապետին նավահանգստից առաջնորդեց Կ. Պոլսի Ս. Աստվածածին Մայր եկեղեցի:

Կ.ՊՈԼՍԻ Ա. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Եկեղեցու դռան առաջ Վեհափառին դիմավորեցին հոգևորականաց դասը՝ երկու շարք կազմած, ժողովրդի խուռներամ բազմությունը, իսկ քիչ հեռվում տասնյակ թուրք ոստիկաններ կարգ ու կանոն էին պահպանում: Ավանդական աղ ու հացի օրհնությունից հետո Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց եկեղեցի՝ զանգերի ուրախ դողանջի ու "Հրաշափառ"-ի երգեցողության ներքո: Կատարվեց երեկոյան ժամերգություն, որից հետո խորան բարձրացան Վեհափառ Հայրապետը, Գարեգին Բ Պատրիարքը և Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆյանը: Նախ բարիգալստյան խոսք ասաց Պատրիարք Հայրը: Ջերմորեն ողջունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Կ. Պոլիս, Պատրիարք Հայրը եզրափակեց իր խոսքը հետևյալ բառերով. "Բարի եկաք Ձեր տունը, Վեհափառ":

Ապա Վեհափառ Հայրապետն իր առաջին պատգամն ուղղեց Կ. Պոլսո հոգևորականությանն ու հայ ժողովրդին.

«Սիրելի Պատրիարք եղբայր,

Սիրեցյալ հոգևորական եղբայրներ՝ արքեպիսկոպոսներ, վարդապետներ, քահանա հայրեր և հոգեղից հավատացյալներ,

Ձեզ շատերուդ համար Մայր Տաճարին մեջ գտնվիլը սովորական կյանքի ապրում մը է: Բայց ինձի համար այս բեմին վրա կանգնիլը առաջի Աստուծո և առաջի ժողովրդյան մեր Պոլսո և հիշատակովը այն ամբողջ հոգևոր, մշակութային, եկեղեցական, ազգային ավանդության, որ ստեղծվեցավ Պոլսո Աթոռին և Պոլսո Հայության միջոցավ դարերու ընթացքին, այդ բոլորին դիմաց գտնվիլը մարդկանորեն դյուրին չէ տանիլ: Հուզումը ամենեն բնական առաջին արտահայտությունն է մարդ էակին և այսօր այդ հուզումն է, որ կողողե իմ սիրտը, միտքը և հոգին:

Այսօր փառք և գոհություն կընծայեմ Աստուծո, որ ինձի պես խոնարհ անձի մը տվավ այդ մեծ և մարդկայնորեն անպարփակելի պահը հոգևոր հարուստ ապրումներու: Այնպիսի մեկ պահ, ու կզգամ ես պատկերները մեծ դեմքերու, պատմակերտ անձնավորություններուն՝ պատրիարք, եկեղեցական, մտավորական, գրող, մամուլի ներկայացուցիչ, արվեստագետ՝ այն բոլորին, որոնք մեր պատմության մեջ արձանագրեցին շքեղ, այնպիսի ոսկեզօծ էջեր:

Այսօր այդ բոլորը, որոնք ինձի համար երևակայություն էին, պատկերներու մեջ ամփոփված էին, գրքերու, գիրերու մեջեն կերևակայվեին, այդ բոլորը այսօր դուրս կու գան իրենց նկարներու շրջանակներեն, դուրս կու գան գրքերու գունատած էջերու մեջեն և կապրին իմ մեջս: Որովհետև Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն, մեր՝ իբրև Քրիստոնյա ազգի ծննդավայրեն, եկեր է նոր Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Անոր անձին մեջեն կարտահայտվի մեր ամբողջ Եկեղեցին իր անցյալով, իր ներկայով և նաև այնքան, որքան տարիներ տա ինձի Աստված՝ ապագայով:

Այսօր այդ մեծ դեմքերը ինձի համար ապրող, շնչող և ներշնչող, մեր բոլորին մեջ ներգործող դեմքեր են՝ Հովակիմ Պատրիարքեն մինչև վերջին շնորհազարդ Պատրիարքը: Բայց ես բոլոր Պատրիարքները եթե հիշելու ըլլամ, վստահ եղեք, որ երկար-երկար խոսելու կարիքը պիտի ունենամ: Առաջին հերթին սրտի պարտք կզգամ հարգանք ընծայելու երկու այն Պատրիարքներուն, որոնք անձամբ ճանչնալու հոգեկան ուրախությունը ունեցած էի՝ Գարեգին Պատրիարք Խաչատուրյանի և Շնորհք Պատրիարք Գալուստյանի:

Աստված թող իրենց հոգիները երկնքի մեջ լուսավորե, բերկրության ապրումովը ծաղկեցնե, որովհետև կտեսնեմ իրենց գործին կենդանի շարունակությունը ձեր բոլորին հավատքին արթնությանը, աշխատությանը և այնպիսի ստեղծագործականությանը մեջ, որ ինձի համար հոգեկան մեծ ուրախության աղբյուր և քաջալերանքի մղիչ ուժ է:

Ես այսօր կշնորհավորեմ մեր սիրելի Գարեգին Գազանճյան Պատրիարքը, որ իր հոգևորական օժանդակողներու շարքերով և իր ժողովուրդով կենդանի կպահե Պոլսո այս փառավոր անցյալի ժառանգությունը՝ նորանոր իրագոր-

ծումներով մեր Եկեղեցվո սպասավորության առաքելության մարգին մեջ:

Սիրելի՛ հավատացյալներ,

Պոլիսը շատ հարուստ պատմություն ունի Հայոց համար, բայց Պոլիսը պատմություն չէ: Պոլսահայությունը հիշատակներով ապրող, միայն անցյալի փառքերով հպարտացող Հայություն չէ և երբեք պետք չէ փորձվի ըլլալ: Ապրող՝ այսօր, վաղվան նայող, հառաջընթաց կյանքի փիլիսոփայությամբ օժտված Հայության մեկ մասնիկն եք այսօր, որ պատմության պիտի նայիք ո՛չ թե իբրև պատմությամբը գոհացող, հայրերու մեզ թողած ժառանգին տոկոսովը ապրող Հայություն մը: Ո՛չ, այլ մեր հայրերուն մեզի ձգածին, մեզի թողածին վրա ձեր բաժինը պիտի ավելցնեք և անոնց բաժինը պիտի ծաղկեցնեք: Մեր Եկեղեցին 2000 տարվան պատմություն ունի: 1700-ամյակը, այսինքն՝ մեր Քրիստոնյա կրոնքը պետականորեն ընդունելու 1700-ամյակը, պաշտոնական հիմնադրության 1700-ամյակը, մեզի կու տա մեր ժողովուրդին հազարամյա պատմության այն սքանչելի, կենդանի, Ավետարանեն բխող ջուրը, որ պետք է խմենք, որպեսզի կարենանք ոռոգել մեր նոր կյանքը, այսօրվան կյանքը, նոր սերունդին կյանքը, գալիք սերունդներուն կյանքը:

Հետևաբար, ես անցյալին հարգանք տալու համար չեմ կանգնած այս բեմին առջև՝ որքան ալ արժանի ըլլա, որքան ալ բնական ըլլա այդ հարգանքի մատուցումը անցյալի փառքին: Ես այսօր կանգնած եմ ձեր առջև այդ հարգանքեն ետք, այդ պատվեն անդին՝ ձեր վրա պարտք դնելու, իմ պարտքս Աստուծմեն ու ազգեն, ուսերուս վրա դրված պարտքը ձեզի հետ բաժնելու, որ իբրև մեկ Եկեղեցի կարենանք այսօրվան մեր պատմական կյանքի շրջադարձային նկարագիր և նշանակություն ունեցող այս օրերուն կանգնիլ Աստուծո առջև և արժանի ըլլալ անոր ժպիտին:

Սիրելինե՛ր, այստեղ կանգնած անձը, իմ խոնարհ ու տկար անձը, Աստված պատվեց և պատմությունը այնպես բերավ, որ ես ըլլամ առաջին Կաթողիկոսը, որ ընտրված ըլլամ մեր Մայր Հայաստանի ազատ ու անկախ պետականության օրով: Դուք չեք կրնար երևակայել, թե ատիկա ինչ մեծ պարտավորություն կդնե իմ ուսերուս վրա: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, դարերու մեր հավատքին այդ խոսնակը, հուշարարը, սենդատու կեդրոնը այսօր դեմ-հանդիման կգտնվի 70 տարիներու հակասստվածյան վարչակարգի մը թողած հետքերուն, և կշանա Քրիստոնեությունը՝ մեր հայրերու ավանդությունը վերակենդանացնել, մեր ժողովուրդին առօրյա կյանքի մեջ զայն վերստին շաղախել ներթափանցելու մեր կրոնքը:

Այսօր պատմական օրեր կապրինք: Կուզեմ, որ իմ այս առաջին խոսքիս ընթացքին զգաք այս մեկը: Այսօր մենք տերն ենք մեր ճակատագրին: Այսօր ուրիշեն կախում չունինք: Մենք ենք, որ պիտի որոշենք, թե ինչ պիտի ըլլանք, ինչ կուզենք ըլլալ և ինչպես պիտի ըլլանք: Առաջ ուրիշները մեզի կթելադրեին: Այս պատմական բացառիկ պահը ի՞նչպես պիտի արժևորենք մենք բոլորս:

Վերանորոգման, վերակերպարանափոխության, տեսակ մը Հայությունը իր հարազատ ամբողջական պատկերին մեջ վերզգալու, վերապրելու և իրականացնելու պարտավորության առջև կգտնվինք, ուր որ ալ ըլլանք՝ Էջմիածին կամ Անթիլիաս, Երուսաղեմ կամ Պոլիս, Միջին Արևելք, Հյուսիսային կամ Հարավային

Ամերիկա, Եվրոպա կամ Մայրագույն Արևելք, ո՞ր երկրի մեջ ալ գտնվինք, ի՞նչ երկնքի տակ ալ ապրինք՝ ունինք մեկ հասարակաց խնդիր. այն, ինչ որ տվավ մեզի Աստված՝ դարերու մեր ըղձանքը, ըլլալ տերը այն հողին, որ մեր հայրերը մեզ իբրև հարեանիք տվին, մեր նահատակները իրենց արյունով ոռոգեցին, մեր գրչագիրները իրենց գիրերով մագաղաթեցին, մեր ճարտարապետները քարերուն շունչ տվին, ձեռագիր կազմողները մագաղաթներու էջերեն երկնային հոգին Աստուծո թարգմանեցին:

Մեկ խոսքով, այն աշխարհը, որուն հողին վրա է այսօր մեր կենքը Հայուն՝ Քրիստոնեական կենքը, այսօր մենք ենք անոր թե՛ տերը և թե ծառան: Եվ առանց ծառա ըլլալու, իրավունք չունինք տերը ըլլալու: Այս է իմ ըմբռնումս՝ նոր Հայության, նորոգված հոգիով Հայության: Եվ այս պատգամով ես եկա ձեզի":

Այնուհետև Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայ Եկեղեցու ինչպես պատմական, այնպես էլ ժամանակակից դերին ու նշանակությանը՝ և՛ որպես հավատքի առաջնորդող, և՛ որպես ազգային միասնականության ապդակ: Վեհափառը փոխանցեց Հունաց Պատրիարքի ողջույնը հայ ժողովրդին, այս առթիվ նշելով նաև միջեկեղեցական համագործակցության ներկա ընթացքում Հայ Առաքելական Եկեղեցու կարևոր դերը: Շնորհավորելով Թուրքիայի Հայոց Պատրիարքությանն ու ողջ հայ ժողովրդին՝ Պատրիարքության հոբելյանական 535-ամյակի առթիվ, Վեհափառն ասաց, որ Կ. Պոլսո Հայոց Պատրիարքարանն ու Կ. Պոլիսն ընդհանրապես ոչ միայն կարևոր է իր անցյալով, այլև այսօր էլ կարևոր մեկ օղակն է Հայ Եկեղեցու:

Հավարտ արարողության և այս ոգեշունչ խոսքի, "Հայրապետական մաղթանքի" երգեցողությամբ, Վեհափառ Հայրապետը թափորով առաջնորդվեց Պատրիարքարան, ուր Նորին Սրբության Օծյալ Սուրբ Աջը համբուրելու համար Պատրիարքարանը լցված էր համայնքային մարմինների ներկայացուցիչներով, մտավորական ու արվեստի գործիչներով, հոգևորականներով: Ժողովրդի ոգևորությունն ու ցանկությունը՝ որքան հնարավոր է երկար բոպեներ անձնապես հանդիպել և օրհնությունն ստանալ սիրեցյալ Վեհափառից, տևեց մի քանի ժամ, և հնարավոր չեղավ իրագործել այդ օրվա ծրագրերից վերջինը՝ Պատրիարքարանի դահլիճում նախատեսված "Բարիգալստյան" ընդունելությունը:

2. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ 535-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

12 Մայիսի, 1996 թվական, Կիրակի, Կ. Պոլիս, Գումգափու, Ս. Աստվածածին Մայր Եկեղեցի – Հիշարժան ուրախալի օր էր այսօր Պոլսահայ գաղութի կյանքում. 35 տարի էր անցել այն օրից, ինչ երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը այցելել էր Կ.

Պոլիս: 35 տարիներ շարունակ Կ. Պոլսո բազմահազար հայությունը Ամենայն Հայոց Կաթողիկոս չէր տեսել իր կարդարված ու պերճաշուք եկեղեցիներում, իր Հայրապետի հետ չէր աղոթել առ Աստված, 35 տարիներ Հայրապետական օրհնություն չէր ստացել, 35 տարիներ... այնքան մոտիկ ու այնքան հեռու այս Կ. Պոլիս քաղաքում: Ե՛վ ներսը եկեղեցու, և՛ բակը, և՛ փողոցը հանդիպակաց լցված էր ժողովրդով, հայերո՛վ՝ տասնյակ հազար: Հրճվանք կար նրանց թախծոտ աչքերի մեջ, հավատք ու նվիրում անմնացորդ, և կարո՛տ, կարո՛տ:

Հուզված է Վեհափառ Հայրապետը, որ իր օրհնությունը բաշխելով իր հավատավոր զավակներին, հոգևորականաց թափորով առաջնորդվում է եկեղեցի: Սկսվում է Ս. Պատարագը: Պատարագիչը Ամենայն Հայոց Հայրապետն է: Ս. Պատարագի ընթացքին Վեհափառը որպես առընթերականներ ուներ Պատրիարքական փոխանորդ Գերաշնորհ Տ. Շահան Արքեպիսկոպոս Սվաճյանին և Երուսաղեմի Պատրիարքության լուսարարապետ Գերաշնորհ Տ. Դավիթ Արքեպիսկոպոս Սահակյանին, քղանցակիրներ՝ Հոգեշնորհ Տ. Միքայել Ծ. Վարդապետ Աջապահյանին և Հոգեշնորհ Տ. Արտակ Աբեղա Տիգրանյանին: Բազմահազար ժողովրդի հետ պատարագին ներկա էին քույր եկեղեցիների ու հարանվանությունների ներկայացուցիչներ, դիվանագետներ, մամուլի աշխատակիցներ: Հայոց Պատրիարքարանի կողմից տրամադրված ավտոբուսներն անընդհատ Մայր Տաճար էին բերում պատարագին ներկա լինել ցանկացող, Կ. Պոլսի տարբեր շրջաններում ապրող հայերի, իսկ պատարագի մեծահանդես արարողությունը պատկերասփռվում էր նաև եկեղեցու հարակից ընդարձակ սրահի պաստառից՝ քանզի եկեղեցու ներսում, դեռ պատարագը չսկսած, արդեն տեղ չկար կանգնելու:

Ս. Պատարագի հիշատակության պահին պատարագիչ Վեհափառ Հայրապետը հիշեց ինչպես Հայոց Պատրիարքական Աթոռի նախկին Պատրիարքներին, այնպես էլ Հայ Եկեղեցու բոլոր նվիրապետական Աթոռների ներկայիս գահակալներին:

"Հայր մեր"-ից առաջ Վեհափառ Հայրապետը քարոզեց և հետևյալ պատգամը տվեց.

«Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս Ջերդ Ամենապատվություն Գարեգին Պատրիարք, սիրելի հոգևոր եղբայրներ, հարգարժան եկեղեցական կազմակերպությունների ներկայացուցիչներ, հոգևորական դասու և դիվանագիտական մարմինների ներկայացուցիչներ և թանկագին հավատացյալներ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո.

Այսօրվան իմ կրոնական խոսքին անցնելն առաջ, ես սրտի պարտք կզգամ իմ խորին շնորհակալությունները հայտնել Պոլսո Հայոց Պատրիարքին, որ հատուկ հրավերով Մեզի կարելիությունը տվավ Մեր՝ որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց ընտրվելեն մեկ տարի ետքը, այս առաջին ամսվան մեջ այցելել ձեզի, երկրորդ

տարվան առաջին ամիսը իմ կաթողիկոսության: Կրկին ձեզի սերը Ս. Էջմիածնի Միաբանության, Մայր Աթոռի միածնաէջ Ս. Խորանեն անմատչելի և անվաճելի օրհնությունը Քրիստոսի, որ իր Էջքովն ի Հայաստան, երկինքը միացուց երկրին, որտեղ Էջմիածինը մեզ համար դարձավ մի տեսակ նոր Բեթղեհեմ: Բարձրորեն կգնահատեմ ձեր բոլորին հոգեկան անխախտելի և անքակտելի կապվածությունը մեր հոգևոր ծննդավայրին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և կհայցեմ Աստուծմե, որ իր օրհնությունը արևի ճառագայթներու պես ձեր հոգևոր ազգային կյանքին վրա միշտ տարածե:

Այսօր, տրված ըլլալով, որ Մեր անդրանիկ հովվապետական այցելությունը կհամընկնի Պոլսո Հայոց Աթոռին 535-ամյակի տոնակատարությանց, ես կողջունեմ ամբողջ մեր ժողովուրդը Իսթանպուլի մեջ և Թուրքիո մյուս քաղաքներուն մեջ, ուր կապրի մեր ժողովուրդը և կհայցեմ Աստուծմե, որ խաղաղությունը տիրե այս երկրին մեջ և մեր ժողովուրդը վայելե բոլոր այն բարիքները, որոնք Աստված ընձեռած է խաղաղության մեջեն, և այդ առիթով արտանց կու գամ իմ շնորհակալությունները հայտնել նաև իմ հոգևոր մյուս եղբայրներուն, որոնք այսօր եկան և մեր այս ուրախությունը բաժնեցին և իրենց բաժինովը հարստացուցին մեր եկեղեցին:

"Ես եկի զի զկեանս ունիցին, և առաւել ևս ունիցին":

Այս բառերով վերջացավ ընթերցումը այսօրվան Ս. Ավետարանին, այս սրբազան բեմեն, քիչ առաջ: Հիսուս ըսավ. "Ես եկա, որպեսզի դուք կյանք ունենաք, և՝ առավել կյանքը ունենաք":

Մեր Տերը կըսե, ես եկա, որպեսզի կյանք ունենաք: Այսօր իր խոնարհ ծառան՝ ես, ինչո՞ւ եկա Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն, եթե ոչ խոնարհաբար կրկնելու համար նույն այդ բառերը մեր Տիրոջ: Ես եկա հիշեցնելու համար ձեզի, որ կյանք ունենաք, այն կյանքը, որ Հիսուսի մտքին մեջ կար, երբ ինք այդ խոսքերը արտասանեց: Ի՞նչ ըսել ուզեց Հիսուս, երբ ըսավ՝ «Ես եկա, որպեսզի դուք կյանք ունենաք»:

Բոլորս ալ գիտենք, որ Հիսուսի այս երկիրը գալեն ու մարմնանալեն առաջ մարդիկ կյանք ունեին, կապրեին, կծնեին, կաճեին, կմեռնեին՝ կյանքին ընթացքը կար:

Ի՞նչ կյանքի կակնարկեր Հիսուս: Ո՛չ բնախոսական կյանքին, որ Աստված իր ստեղծագործությամբ տված է բոլոր էակներուն աշխարհի: Այս բնազդական կյանքին մեջ ապրիլը ծնելու, աճելու և մեռնելու ընթացքն է, որմե անդին սակայն պետք է, կա կյանք մը, որ արժեք ունի, որովհետև երջանկության աղբյուր մը կդառնա և մարդուն կուտա հոգեկան գոհունակությունը:

Ըսված է տեղ մը և շատ խորունկ է այդ խոսքը, մարդ երկու անգամ կծնի: Կծնի ի հորե և ի մորե մեկ անգամ և կծնի վերստին, երբ կգիտնա, թե ինչո՞ւ ծնած է, երբ կգիտենա, թե ինքը ինչո՞ւ համար կապրի այս աշխարհին մեջ: Այս է իր բուն մարդկային ծնունդը, և Հիսուս եկավ մեր վերածննդյան համար, որպեսզի մենք կարենանք կյանքին բնախոսական ընթացքին մեջ այնպիսի կյանք մը ապրիլ, որ Աստուծո ստեղծագործության նպատակին համաձայն կյանք մը ըլլա և ճշմարիտ երջանկությունը բերե մեզի, այն, ինչ որ Ավետարանին մեջ կկարդանք և

կլսենք, այսինքն՝ երկնի արքայությունը, այս կյանքը, որում մեջ դուն կտեսնես քու գոյությանդ իմաստը, որում մեջեն կիրագործես այնպիսի գործեր, կարտահայտես այնպիսի ապրումներ, որոնք, երբ ֆիզիկական գոյությունդ երթա, ինչ որ ճակատագրով նախատեսված է, հող էիր և հող պիտի ըլլաս, անմահացնե քու գոյությունդ անմահության գաղափարին իրագործումովը քու կյանքի մեջ:

Ահավասիկ հավատացյալներ, այսօր ես այս խորանին վրայեն հիշեցի անուններ, անուններ, որոնք դարեր առաջ, տասնամյակներ առաջ ինծի և ձեզի պես միս ու ոսկոր ունեին, այս տաճարին մեջ պատարագեցին և օր մը եկավ և իրենց ֆիզիկական մարմնեղեն գոյությունը քայքայվեցավ ու գնաց: Բայց այն կյանքը, որ ապրեցան, այդ կյանքը ահավասիկ կապրի մեր մեջ: Կյանքի որակն է այդ մեկը, ոչ թե տևողությունը: Եվ մենք հաճախ կտարվինք մանավանդ ներկա դարուն, երբ գիտական, ճարտարվեստական մեծ նվաճումներ կատարած է մարդկությունը, մենք կփորձվինք դյուրակյացության, հեշտակյացության փորձություններեն:

Կա կյանքի փիլիսոփայություն մը, բոլորդ ալ թերևս գիտեք՝ «կեր, արբ և ուրախ լեր»: Կեր, խմե և հաճոյացիր: Եթե այս է ըմբռնումը, հարց կու տամ ձեզի բոլորիդ՝ ի՞նչ է մեր մարդկային կյանքի տարբերությունը անասնական կյանքեն: Եթե մենք կսահմանափակվինք ժամանակի և զգայարանական հաճույքներուն մեջը, որոնք անցողական են, ինչ կըլլա մեր կյանքի իմաստը:

Այսօր կուզեմ ձեզի իմ կյանքի փորձես, կյանքի փորձառությենեն շահված ճշմարտություն մը բաժնել օրվան նշխարին ու հաղորդության պես: Ըսե՛ք ինծի, ի՞նչ բանի արժեք կու տաք, ըսեմ ձեզի ով եք դուք: Ի՞նչ բանի մեջ կդնես քու սիրտդ, միտքդ, կամքդ, ջանքդ, ձգտումդ, ըսե՛ ինծի, այն ատեն կրնամ ըսել, թե ով ես դուն: Եթե ամբողջ կյանքդ վազք մըն է դեպի հաճույք, կրնամ ըսել քեզի, թե հաճոյապաշտ մըն ես: Եթե ըսես ինծի, թե կյանքի ձգտումը, նպատակակետը գիտությունն է ու գիտությունը մարդկային ծառայության համար, ո՛չ թե անձիդ համար, այն ատեն կրնամ ըսել քեզի՝ ապրի՛ս: Գիտության, իմաստության անլոգելի արժեքներով կչափվիս: Եթե ըսես ինծի, իմ նպատակս է նյութական հարստություն ձեռք բերելը, պիտի ըսեմ քեզի նյութ ես և նյութին հետ կերթաս, կաս ու չկաս՝ ոչինչ կարժե, որովհետև ըսված է սաղմոսերգուին կողմե. «Մարդուն օրերը խոտի կնմանին՝ կբուսնին, կծաղկին, հով մը կփչե, կչորանան ու կերթան և չես գիտեր թե եղած են, թե չեն եղած» :

Սիրելինե՛ր, սքանչելի խոսք մը ունի մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, այս խոսքը մեկնաբանությունն է այսօրվան իմ բնաբանին. «Հոն, ուր կտեսնես կյանք, այսինքն արժեք կտեսնես, հոն կդնես ամբողջ սիրտդ, ամբողջ էությունդ»:

Այսօր եկե՛ք պահ մը անցնող մեր կյանքին վրա ակնարկ մը ձգենք: Ի՞նչ մնաց Ս. Գրիգոր Լուսավորչի կերածեն ու խմածեն, հագուստեն ու կապուստեն: Ի՞նչ մնաց Մեսրոպ Մաշտոցեն, ի՞նչ մնաց Քաջն Վարդանեն՝ սաղավա՞րտը, ծիրանի՞ն: Մեկեն մնաց հավատքը՝ Լուսավորչեն, մյուսեն մնաց գիրը և մյուսեն մնաց հայրենիքի սերը: Երեք սրբություններ, որոնք իրենց հետ չգացին:

Այսօր, երբ ես ահավասիկ մեկ տարիե ի վեր կապրիմ մայրենի հողին վրա, երբ ամեն անգամ կպտտիմ մեր Մայր Հայաստանի գավառները, երբ կտեսնեմ չորսդին դեպի երկինք բարձրացած խորանները Հայոց տաճարներուն, երբ աչքերս

կսեռին մագաղաթներում վրա, երբ կտեսնեմ այն բոլոր նվաճումները, որոնք կատարված են մեր պատմության ընթացքին, այն ատեն է, որ կհասկնամ Քրիստոսի հավատքի ուժը և մեծությունը: Ճշմարտությունը հավիտենական է երեկ և այսօր, այստեղ և այնտեղ՝ աշխարհի չորս ծագերում:

Իսկ մեր Սիյոնքի Հայությունը, որ կապրի Մայր Հայրենիքեն դուրս, և դուք՝ այստեղ, այս քաղաքին մեջ և Թուրքիո տարածքին վրա ապրող Հայերդ, դուք այս հոգեկան արժեքներով է, որ շիներ եք այս եկեղեցին և Պոյսո բոլոր եկեղեցիները: Ջանգակներ են դեպի Աստված այդ ճշմարտությունը վեր առաքող՝ դեպի երկինք և տարածող դեպի Հայություն: Եկեղեցին է սիրտը Հայության, որովհետև եկեղեցին է հանդիպումը Աստուծո և Հայության: Եկեղեցին է համբույրը մեր երկրին և երկնքին: Եվ ապրի՛ք, ժողովուրդ, ապրի՛ք, որովհետև գիտեք այսպես ապրիլ, եկեղեցիին հոգին ձեր մեջ ապրեցնել, որովհետև այն ատեն մասնակից կդառնաք հավերժության, անմահության: Այսպես կվկայեին ձեր հայրերը և այսպես կվկայենք մենք այսօր՝ այս խորանին վրա:

Դուք կտոնեք ձեր Եկեղեցվո, Պատրիարքության 535-ամյակը: Ահավասիկ եկած են նաև, իմ կողքիս են Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի ներկայացուցիչը, Երուսաղեմի Պատրիարքության ներկայացուցիչը: Ինչո՞ւ այս համազգային տարողությամբ կնշվի 535-ամյակը: Ո՛չ թե անցյալին հարգանք ընծայելու համար: Անցյալը ձեր հարգանքին պետք չունի, անցյալը ուզենք-չուզենք անցյալ է, չենք կրնար փոխել: Եկած ենք անցյալեն նոր ուժով ներարկվելու և մեր ներկան ու ապագան այդ արժեքներու ներգործության զորությամբը խմորելու:

Մեծ դաս մը է 535-ամյակը մանավանդ ձեզի, սիրելի երիտասարդներ: Դուք, որ կյանքին կբացվիք, դուք, որ դեպի ապագան կնայիք, ինչով կհպարտանաք եթե ուրիշներ ձեզի ըսեն, թե դուք Հայ ե՞ք: Ինչ բան ցույց պիտի տաք ուրիշին, որ ձեզի ձեր Հայությամբը արժեքավորված ըլլաք: Այն արժեքները, որոնք մեր Եկեղեցիով մարմնավորված են, մեր լեզվով մարմնավորված են, մեր մշակույթով մարմնավորված են:

Այսօր ես կծառայեմ այս Եկեղեցիին, ուրիշներ պիտի գան և անոնք պիտի ծառայեն ապագային, բայց մենք օղակներ ենք, ոսկի շղթան, որ օղակները կբռնե այդ ոսկի շղթան, մեր Քրիստոնեական մաքուր հավատքն է, որ այս Եկեղեցիին կողմե կներմանվի, կցանվի մեր ամենօրյա կյանքին մեջ:

Սիրելի հավատացյալներ, ես շատ մոտեն կհետևիմ արդի աշխարհի կյանքին: Ապրեցա Միջին Արևելքի մեջ, ուսում առի Եվրոպական աշխարհի մեջ, ծառայեցի Ամերիկյան աշխարհին մեջ և այժմ կյանքս ամբողջ գոյությամբս ի սպաս դրած եմ մեր Մայր Հայաստանի կյանքին: Աշխարհը ճանչցա և շատ մոտեն կհետևիմ այն փոփոխություններուն, որոնք տեղի կունենան աշխարհի մեջ: Մակերեսայնապաշտության, դյուրակեցության հով մը սկսած է նոր փորձանք դառնալ: Երաժշտությունը սկսեր է դադրիլ երաժշտություն ըլլալե, սկսեր է վերածվիլ խաղի, շարժումի, հագուստի, կապուստի, ձևի, պարի: Մշակույթը՝ հոգին բարձրացնողը, հոգիին ծաղկումը եղողը հասարակ երևույթ մը դարձած է: Այս փորձութենեն հետու մնացե՛ք, կաղաչեմ, հոգևոր արժեքներու, մշակույթի բարձր արժեքներու հետամուտ եղեք: Դուրսի աշխարհեն կու գան այս ազդեցությունները

ները: Այսպես կոչված գրավիչ, մեր զգայարանքներուն հաճելի թվող ազդեցություններեն հեռու կեցեք:

Ես, այսօր, վաղը, պիտի կարենամ մեր ժողովուրդի պարզ խավին հետ շփվելու, մանավանդ դպրոցական աշակերտներու և երիտասարդներու հետ հաղորդվելու: Պիտի ուզեմ իրենց իմ միտքս, սիրտս, 44 տարիներու եկեղեցական կյանքիս մեջ ինչ որ կրցած եմ իբրև փորձառություն ամբարել, բաժնել անխտրաբար: Եվ ըսել, ինչպես այսօր այս բեմեն կհայտարարեմ ձեզի, ով սիրելի հավատացյալ ժողովուրդ, հեռու մնացե՛ք մարդս անմարդկայնացնող, մարդս մարդ ըլլալե դադրեցնող և զգայարանական, ժամանակավոր, խաբուսիկ, ճոճիմ արժեք կոչված բաներու ետևեն վազելե: Զգուշացեք, 535 տարիներու փորձը այսօր այս խորանեն որպես նոր մյուռոն ընդունեցեք: Գնաց գնալիքը, մնաց մնալիքը, գնաց հարդը, մնաց ցորենը: Որո՞ւն ետևեն եք դուք, հարդի՞ն, թե ցորենին: Հայ գրականություն, Հայոց պատմություն, Ավետարանի լույսով լուսավորված, Քրիստոսի հարությամբը օժտված մեր ամբողջ մշակույթը թող ըլլա ձեր կերակուրը: Եվ այսպես է, որ ճաշակելով դուք կհաջողիք անմահության բաժնեկից դառնալ և ապագային տանիլ ձեր նոր սերունդները:

Այսօր Հիսուսի խոսքը վերստին հիշեցնելով ձեզի, կրսեմ. «Հիսուս եկավ, որպեսզի դուք ա՛յս կյանքը ունենաք»: Կյանք մը Աստուծմով դրոշմված, կյանք մը Աստուծո պատկերը ձեր մեջ ապրեցնող, այսպիսի կյանքին թարգմանիներեն մեկն եմ ես այսօր և կու գամ ձեզի Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն, ըսելու. «Մատիք առ Տէր և առէք զլոյս, ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է Տէր»: Մինչև որ չճաշակեք, մինչև որ չունենաք ծարավը հոգևոր արժեքներու՝ չեք կրնար ունենալ գիտակցությունը և մեծությունը անոնց վայելքին: Ամեն անգամ, երբ ես «Պահպանիչ և լոյս հաւատացելոց Քրիստոս Աստուած մեր» աղոթքը կարտասանեմ, օրհնությունը կու տամ, կրսեմ. «Փրկեա մեզ յերկնի և յաներկոյթ թշնամւոյն», հարց կուտամ. Ի՞նչ է այդ աներկոյթ թշնամին: Անտեսանելի կերպով կմտնե մեջդ, ոգին սպանող, հոգին սպանող և միայն մարմնեղեն, միայն երկրավոր արժեքներուն կարևորություն տալու գիտակցությունն է, որ կմտնե մեր մեջ և կքանդե զմեզ մեր մեջ, կքանդե բուն մարդը մեր մեջ, կքանդե բուն Քրիստոնյան մեր մեջ: Հիսուս եկավ, որպեսզի դուք ունենաք առավել կյանք՝ կյանքեն անդին բուն կյանքը, հոգևոր կյանքը, որ առաջին իմաստով կյանքը կիմաստավորե և կարժեքավորե:

Հետևաբար, եկե՛ք այս իմաստով այսօր ըսենք. «Եկայք շինեսցուք Սուրբ զխորանն լուսոյ» մեր հոգիներուն: Էջմիածնի շարականին տողերն են ասոնք. «Եկայք շինեսցուք Սուրբ զխորանն լուսոյ»: Էջմիածինը ձեր մեջն է՝ իբրև այս կյանքին թարգման, Աստուծո բերած, Որդվույն Աստուծո Քրիստոսի բերած կյանքին թարգմանը: Ապրեցե՛ք զայն և անով ապրեցեք ձեր ամբողջ կյանքը գալիք սերունդներով Աստուծո փառքին, մեր ազգի պայծառության և մեր Եկեղեցվո շինության համար, հավիտյանս, հավիտենից ամեն»:

Սպա խորան բարձրացավ Ամենապատիվ Գարեգին Բ Պատրիարքը, և Վեհափառ Հայրապետը նրան հանձնեց Հայոց Պատրիարքության 535-ամյակի առթիվ նվեր՝ Մայր Աթոռում պատրաստված մի գեղաքանդակ ու թանկարժեք սկիհ:

Հավարտ Ս. Պատարագի, իր ուղեկից Միտրոպոլիտներով հանդերձ եկեղեցի մուտք գործեց նաև Հունաց Տիեզերական Պատրիարքը՝ Նորին Սրբություն Բարթողոմեոս Ա-ը, որ ի դիմաց հայ ժողովրդի եկաւ մեկ անգամ ևս հաստատելու Հայ և Հույն Եկեղեցիների, ինչպես նաև երկու ժողովուրդների սերն ու եղբայրությունը: Կ. Պոլսո հայոց Մայր եկեղեցու խորանին երկու Հայրապետները ջերմորեն ողջագուրվեցին և ֆրանսերենով ելույթներ փոխանակելով վերարտահայտեցին երկու Եկեղեցիների ու երկու ժողովուրդների փոխադարձ սերն ու վաղեմի հարգանքը:

Ս. Պատարագի ավարտին տեղի ունեցավ մասնավոր հոգեհանգստյան պաշտոն՝ ի հանգիստ Պատրիարքական Աթոռի վախճանյալ Աթոռակալների հոգիների:

Արարողությունների ավարտից հետո հայոց և հունաց կրոնապետերը, օրհնելով ժողովրդին, առաջնորդվեցին Հայոց Պատրիարքարան՝ մեկ ամսիոնանու ներքո: Պատրիարքարանում պատրաստված սիրո ճաշի ժամանակ Հունաց Պատրիարքը Հայաստանից եկած հեռուստատեսության աշխատակիցների միջոցով փոխանցեց իր ողջույններն ու բարեմաղթանքները Հայաստանաբնակ ժողովրդին:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՊՈԼՍԱՀԱՅ ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

Ճաշից անմիջապես հետո, ժամը 16.30-ին, Վեհափառ Հայրապետը հրավիրվեց Մայր եկեղեցուն կից "Հարություն Ամիրա Պեկճյան" սրահ, ուր 1500-ից ավելի պոլսահայ աշակերտներ որոտընդոստ ծափահարություններով, մանուշակագույն դրոշակները ճոճելով դիմավորեցին Նորին Սրբությանը: Եվ Վեհափառը, "որ հոգնել կամ ձանձրանալ չի գիտեր", ինչպես գրեց հայկական թերթերից մեկը, սկսեց աշխույժ ու մտերմիկ զրույց երեխաների հետ, նրանց կոչելով "շատ սիրելի փոքրիկ եղբայրներ ու քույրեր": Վեհափառը խոսեց մանուկներին հասկանալի լեզվով, անթաքույց գուրգուրանքի ժպիտը դեմքին, կատակներով, խրատական, ուսուցողական պատմություններով ու հորդորներով: Պատմեց Ս. Գրիգոր Լուսավորչի ու Ս. Էջմիածնի մասին, պատգամեց կարգապահությամբ ու լավ սովորելով նախապատրաստվել ապագին ծառայելու:

Վեհափառի խոսքի ավարտին, որ հաճախ ընդհատվում էր բուռն ծափահարություններով, երեխաներն սկսեցին երգել "Եկեղեցին հայկական" երգը և Վեհի Աջը համբուրելով՝ ուղեկցեցին մինչև Պատրիարքարան:

Սակայն մի քանի րոպեից, իրապես հոգնել ու ձանձրանալ չիմացող Վեհափառ Հայրապետը նորից սրահ իջավ, ուր հավաքվել էին Պոլսի բուհական շրջանների հայ ուսանող-ուսանողուհիները, բազմաթիվ երիտասարդներ: Նրանք Վեհափառ Հայրապետին դիմավորեցին ծա-

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՊԵՋՀԵՅԱՆ ՍՐԱՀՈՒՄ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՊԱՀԻՆ

փահարություններով և "Գովեա Երուսաղէմ զՏէր" շարականի երգեցողությամբ: Երիտասարդության հետ հանդիպումը տևեց ավելի քան մեկ ժամ:

"Եթե այս հանդիպումը չունենայի, ես մեծ ցավ պիտի զգայի"-այս բառերով սկսեց Վեհափառը երիտասարդներին ուղղված իր խոսքը: Սպա Վեհափառը հատկապես ընդգծեց գիտակցության ու պատասխանատվության զգացումի կարևորությունը, հոգևոր և մտային պաշարով սեփական ապագան կերտելու անհրաժեշտությունը և Պոլսահայ երիտասարդներին թելադրեց հստակ ու նպատակային ծրագրեր ունենալ ապագայի համար, հեռու մնալով մոդայական շարժումներից, խառն ամուսնություններից, մարմնական հաճույքների ծայրահեղություններից: Սպա Վեհափառը պատասխանեց երիտասարդներին հետաքրքրող բազմաթիվ հարցումներին և բոլորին հրավիրեց ներկա գտնվել Սեպտեմբերին Ս. Էջմիածնում կազմակերպվելիք մյուռոնօրհնեքին:

"Հայրապետական մաղթանքի" երգեցողությամբ երիտասարդները ճանապարհեցին Վեհափառին՝ խոնարհաբար Աջը համբուրելով:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԵՎ ՊՈԼՍԱՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Կ. Պոլսում և արվարձաններում ապրում են 50-60 հազար հայեր: Կ. Պոլսում գործում են 38 հայկական եկեղեցիներ: Եվ, բնականաբար, վերը հիշված պատարագին բոլոր պոլսահայերը չէ, որ կարողացան ներ-

կա լինել և հանդիպել իրենց սիրելի Հայրապետին: Ուստի Վեհափառը նախաձեռնեց պտույտ և այցելություններ հայկական եկեղեցիներ:

Նորին Սրբությունը նախ եղավ Եշիլգյուղի Ս. Ստեփանոս եկեղեցում: Այստեղ հայահոծ թաղ է: Եկեղեցու բակը լցված էր վարժարանի աշակերտներով ու բազմաթիվ ժողովրդով, որ Վեհափառի ճանապարհին անուշաբույր վարդեր էին շաղ տալիս, իրենց հրճվանքն արտահայտում ծափողջույններով: "Բարի գալուստ, Վեհափառ Տեր"- մեծ-մեծ տառերով գրված էր օդում ծածանվող պաստառին: Եկեղեցում կարճ աղոթքից հետո, Վեհափառը դարձավ ժողովրդին, ողջունեց ու օրհնեց բոլորին և պատվիրեց, որ բոլորով միասնաբար տեր կանգնեն եկեղեցուն ու Ս. Ստեփանոս նախավկայի հիշատակին, իսկ հայեցի ինքնությունը տնապես պահելու համար՝ "Տղոց մի՛ ըսեք՝ եկեղեցի գնա՛, այլ ձեռքեն բռնեցե՛ք ու եկեղեցի տարեք", պատգամեց նա:

Հաջորդը Պագրգյուղի Ս. Աստվածածին եկեղեցին էր: Այստեղ ևս խուռներամ բազմությամբ ժողովուրդ էր հավաքված: Եկեղեցու "Քառասուն մանկանց երգչախմբի" անդամները "Տերունական Աղոթքի" և "Ուրախ Լեր" շարականի երգեցողությամբ, ժողովրդի ծափողջույնների ներքո, Վեհափառ Հայրապետին առաջնորդեցին եկեղեցի: Եկեղեցու խորանից դիմելով ժողովրդին, Նորին Սրբությունն ասաց.

«Սիրելի հավատացյալներ, ժողովուրդ Պաքըրգյուղի: Մեր անդրանիկ այցելության, Երկուշաբթիի այս առավոտը ես կնկատեմ, կզգամ, կըմբռնեմ որպես ժողովուրդի հետ հաղորդության օր: Քիչ առաջ Եշիլգյուղ էի, հիմա Պաքըրգյուղ եմ, կեսօրե ետք ալ ուրիշ տեղ պիտի երթամ: Կեսօրին մեր հիվանդներուն պիտի այցելեմ Ս. Փրկիչ Ազգ. Հիվանդանոցի մեջ: Մեկ խոսքով, շարաթս կբանամ ձեզի հետ, աղոթակից դառնալով և Աստուծո նայվածքին ներքև բոլորիս հավատքը միասին արծարծելով, զորացնելով փոխադարձաբար, իրարու հետ բաժնելով մեր հայրերեն մեզի կտակված Ավետարանի Սուրբ աղբյուրեն բխող Քրիստոնեական մաքուր և մաքրարար հավատքը: Այսօր ես երջանիկ կզգամ ինքզինքս, երբ կտեսնեմ այսպես եռուն, խանդավառ հավատքին արտահայտությունը, մեր ժողովուրդի, Պոլսահայ ժողովուրդի և հատկապես Պաքըրգյուղի այս շրջանի ժողովուրդին մեջ: Երջանիկ կզգամ, մանավանդ տեսնելով այս դպրոցական երեխաները, որոնք նոր սերունդն են և կնային դեպի ապագա, մինչ մենք, տարիք առնողներս, կերթանք դեպի անցյալ: Իրե՛նք են, որ կտնուրջն են անցյալեն դեպի ներկա և դեպի ապագա:

Նոր սերունդին համար փառք կուտամ Աստուծո: Մենք երբ փոքրիկ էինք իրենց նման, լավ պայմաններ չունեինք կյանքի: Կմաղթեմ, որ նոր սերունդի փոքրիկները առավել ունենան, որպեսզի իրենք ալ չզրկվին այն բաներեն, որոնցմե մենք զրկվեցանք, որպեսզի առողջ մեծնան և կարենան մեր ժողովուրդի ապագան առողջ հիմերու վրա դնել, որպեսզի ո՛չ մեկ ոտ կարենա խախտել այդ ապագան»:

Ս. ՓՐԿԻՉ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

Սպա Վեհափառ Հայրապետը իր բարեմաղթություններն ու օրհնությունները բաշխեց ժողովրդին և ճանապարհվեց դեպի Ս. Փրկիչ Սկգային Հիվանդանոց, որ հիմնվել է 1833 թվականին և առ այսօր իր ծառայություններն է մատուցում հայ ժողովրդին: Հիվանդանոցի մուտքին Վեհափառին դիմավորեցին հիվանդանոցի հոգաբարձության անդամները, բժիշկները, բուժքույրերն ու ենթահանձնախմբի անձնակազմը: Նրանք Վեհափառ Հայրապետին նախ առաջնորդեցին հիվանդանոցին կից կառուցված Ս. Փրկիչ մատուռ, ուր համատեղ կարճ աղոթք կատարվեց հիվանդների ապաքինման ի խնդիր: Սպա Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆյանը հակիրճ պատմեց հիվանդանոցի անցյալի ու ներկայի մասին:

Վեհափառ Հայրապետն իր խոսքում բարձր գնահատեց հիվանդանոցի բժշկական ու ծառայող անձնակազմի նվիրյալ աշխատանքը՝ հայ աշխարհի մեջ իր նմանը չունեցող այս հիվանդանոցում, կարևորեց բարեգործության արժեքը հայ իրականության մեջ և եզրափակեց իր խոսքը՝ "ուրիշին տառապանքը հանձն առնելով՝ Հիտսին ծառայած կըլլանք, ուստի ուրիշին համար կատարված ծառայությունները թող ըլլան մեր կյանքին նշանաբանը" իմաստալի նախադասությամբ:

Վեհափառն իր ուղեկիցների ու բժիշկների հետ շրջեց հիվանդանոցում, այցելեց հիվանդասենյակներ, հիվանդների որպիսությունը հարցնելով, առողջություն մաղթելով ու քաջալերելով՝ հաղթելու հիվանդությունը և նորից կյանք վերադառնալու: Հիվանդանոցի բժշկական աշխատասենյակներից մեկում, կարճ դադարի ընթացքին, Վեհափառը հետևյալ հայտարարությունն արեց Հայաստանից ժամանած հեռուստատեսության աշխատակիցներին. "Եթե ես այս հաստատությունը այցելած չըլլայի, վստահաբար ինձմե բան մը պիտի պակսեր, մեր այցելության գնդեցկութենեն, ամբողջականութենեն բան մը կորսված պիտի ըլլար: Այստեղ տեսա, թե բարեգործության, կյանքի ու առողջության խնամքին հանդեպ ցույց տրված հոգածությունը ազգային նկարագիր է, Քրիստոնեական մեր հավատքեն, մեր Եկեղեցիեն ներշնչված է: Ես հոս տեսա կանոնավորություն, մաքրություն, կազմակերպվածություն, տեսա նաև գիտական բարձր աստիճանի խնամատարություն, գործիքներ՝ մասնագետներու աշխատանքով հայթայթված, մեկ խոսքով տիպար հաստատություն մը: Երանի՜ այսպիսի հաստատություններ ունենայինք մեր այն վայրերու մեջ, ուր մեր ժողովուրդը այսպիսի հաստատություններու կարիքը կզգա ավելի մեծ թվով":

Ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելության, ժամը 14-ին, հիվանդանոցի ընդարձակ սրահում տրվեց ճաշ, ուր հոգևորականաց հետ ներկա էր հիվանդանոցի ողջ աշխատակազմը: Ճաշի ավարտին Վեհափառ Հայրապետը մեկ անգամ ևս գնահատանքի ու օրհնության խոսք ասաց հիվանդանոցի աշխատողներին և հիվանդանոցին նվիրեց



ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Ս. ՓՐԿԻՉ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

Ս. Էջմիածնից իր հետ բերած գրքեր ու "Էջմիածնի Գանձեր" ալբոմը: Իսկ Ս. Փրկիչ Ազգային հիվանդանոցի հոգաբարձության ատենապետ Փիլո Աթան, շնորհակալություն հայտնելով Վեհափառին այցելության առթիվ, նվիրեց արծաթյա մի հուշանվեր-ափսե՝ հիվանդանոցի շենքի քանդակով:

Ապա Վեհափառ Հայրապետը այցելեց նաև Սամաթիայի Ս. Գևորգ եկեղեցի, որին կից գործում է նաև Սահակյան վարժարանը: Այստեղ նույնպես հայահոծ բազմություն էր հավաքված՝ տեղի հոգևորականությունը, թաղային խորհրդի ու թաղային օժանդակ մարմինների անդամներ, Վարժարանի ուսուցիչներ և աշակերտներ: Վեհափառ Հայրապետն օրհնեց բոլորին և պատգամեց կապված մնալ Հայոց Եկեղեցուն ու մայրենի լեզվին:

Այսօր տոն էր Պոլսահայության համար, և ամենուրեք, ուր Նորին Սրբությունն այցելեց, ժողովուրդն իր ուրախությունն արտահայտելու նորանոր ձևեր էր որոնում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ 535-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Նույն օրը, երեկոյան ժամը 17:30-ին, Հայոց Պատրիարքարանի դահլիճում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն՝ Պոլսի Հայոց Պատրիարքական Աթոռի հիմնադրության 535-ամյակի առթիվ: Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա-ի կողքին տեղ էին գրավել Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին

Սրբություն Բարթոլոմեոս Ա-ը և Թուրքիայի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Գապանճյանը:

Պաշտոնական ընդունելությանը ներկա էին Ռուսաստանի, Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Իտալիայի, Իսրայելի ու այլ երկրների հյուպատոսներ, դիվանագետներ, Թուրքիայի կառավարության կողմից՝ նախկին կրոնից տեսուչ՝ պետնախարար Լյութֆյու Տողանը, Կ. Պոլսի մոտակա կղզիների քաղաքապետ Ջան Էսեն, երեսփոխան Ջեֆի Գամիը, տեղի քույր եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ, հարանվանությունների ներկայացուցիչներ, լրագրողներ:

Հանդիսության բացման հակիրճ ուղերձով հանդես եկավ Թուրքիայի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին Բ Գապանճյանը:

Նորին Ամենապատվությունն ասաց.

«Վեհափառ Տեր, Մեծահարգ ներկաներ,

Թուրքիո Հայոց հոգևոր և մշակութային կեդրոնին՝ Պատրիարքական Աթոռի հիմնադրության 535-ամյակի առթիվ մեր կազմակերպած ընդունելությանը բարի եկաք:

Ֆաթիհ Սուլթան Մեհմետ, Ստանպուլի գրավման հաջորդող տարիներուն Անատոլուի զանազան նահանգներու բնակիչ Հայերը բնակեցուց Ստանպուլ: Կազմավորված համայնքի հոգևոր պետքերու դիմագրավման և կանոնավորման համար Պրուսպի Հայոց Առաջնորդ Հովակիմ Արքեպիսկոպոսը Ստանպուլ բերելով իրեն Պատրիարք տիտղոսը տվավ:

1461-են սկսյալ նախ Օսմանյան, ապա Թուրքիո Հայոց հոգևոր կեդրոնը՝ Պատրիարքական Աթոռը, միշտ դրոշակակիրը եղած է սիրո, խաղաղության, լայնախոհության, հավատարմության, և "հավատարիմ քաղաքացի" պատվական տիտղոսին տիրացած Հայ համայնքը առաջնորդած է դեպի լավին, գեղեցիկին և բարիին:

Այսօր ալ մեր Պատրիարքական Աթոռը, ինչ որ ալ ըլլա, իրենց արմատները ամեն տեսակ անաբեկչության, մարդկային իրավաց բռնագրավման, մարդոց կյանքին սպառնացող իրավիճակներուն, մանավանդ իր կրոնական հավատքին պատճառավ մարդոց վատ վարմունքի ենթարկվելուն դեմ կկանգնի: Պատրիարքական Աթոռը, որ ցարդ իր գործունեությունը կշարունակե, ըլլալով լայնախոհության հուշարձան մը, կրոնական, ընկերային և այլ գիտական շրջանակներու մեջ կայացած ժողովներուն ընթացքին այս տեսակետը պաշտպանած է:

Այսօր ալ մեր համայնքը իր կրոնական, կրթական, բարեսիրական հաստատություններով կշարունակե գոյատևել այս երկրին մեջ: Ի բոլոր սրտե կցանկանք, որ մարդկությունը խաղաղության մեջ եղբայրաբար ապրի:

Ամեն տարի մեծ ուրախությամբ կտոնենք Պատրիարքական Աթոռի հիմնադրության տարեդարձը: Այս տարի մեր ուրախությունը կրկնապատկված է անոր համար, որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա մեր մեջ կգտնվի: Նորին Սուրբ Օծությունը ևս կցանկա, որ մարդիկ ապրին խաղաղության մեջ, եղբայրական և բարեկամական զգացումներով տոգորված:

Թուրքիո Հայ համայնքը իր բոլոր հաստատություններով պիտի ընե իր կարելին, որպեսզի մարդոց միջև հաստատվի խաղաղությունը, բարեկամությունը, սերը և երջանկությունը:

Լավագույն զգացումներով կբարևեմ Ձեր բոլորը: Բարի եկաք»:

Ապա խոսքը տրվեց Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբությունը հմուտ անգլերենով շնորհավորեց Գարեգին Պատրիարքին՝ Պատրիարքության 535-ամյակի առթիվ, ապա ողջունեց Տիեզերական Պատրիարքին, պետական պաշտոնյաներին, դիվանագետներին, հոգևոր աշխարհի ներկայացուցիչներին՝ այս տոնակատարությանը ներկա գտնվելու համար: Վեհափառն իր խոսքում շնորհակալություն հայտնեց հանդիսությանը ներկա երկու Պատրիարքներին՝ իրեն Պոլիս հրավիրելու կապակցությամբ, որը կուգադիպում է Հայոց Պատրիարքության 535-ամյակին: Ապա անդրադարձավ և բարձր գնահատեց Թուրքիո Հայոց Պատրիարքության 535-ամյա գործունեությունը՝ աղոթելով առ Աստված և մաղթելով անսասանություն Հայց. Եկեղեցու բոլոր Սրոոներին:

Իր խոսքի վերջում, անդրադառնալով Հայց. Եկեղեցու 1700-ամյակին, Վեհափառ Հայրապետը հրավիրեց բոլորին ներկա գտնվելու 2001 թ. Ս. Էջմիածնում կայանալիք այդ հոբելյանական հանդիսությանը:

Այնուհետև Վեհափառը հուշանվերներ հանձնեց Հունաց և Հայոց Պատրիարքներին:

Պատրիարքարանում ընդունելության ավարտից հետո Սրոոանիստ Մայր եկեղեցուն կից «Պեկճյան Սմիրա» սրահում տրվեց ընթրիք՝ ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Ընթրիքին ներկա էին չորս հարյուրից ավելի եկեղեցական ու համայնքային գործիչներ, ինչպես նաև Հունաց Պատրիարքության կողմից՝ Կիրիլոս Միտրոպոլիտը: Ընթրիքի ժամանակ խոսք ասացին Մեսրոպ Մութաֆյան, Շահան, Ասողիկ, Դավիթ, Մեսրոպ Աշճյան, Տիրայր Մարտիկյան սրբազանները և Ամենապատիվ Գարեգին Պատրիարքը: Նրանք իրենց խոսքում անդրադարձան Հայ Եկեղեցու, Մայր Սրոո Ս. Էջմիածնի դերին ու նշանակությանը, Եկեղեցու բոլոր նվիրապետական Սրոոների միասնական առաքելությանը և ներկայիս Ամենայն Հայոց ազգընտիր Կաթողիկոսի արժանիքներին՝ որպես նվիրյալ հայրը հանուր հայության և տիպարը հայ հոգևորականության:

Ապա օրվա իր յոթներորդ ոգեշունչ ելույթն ունեցավ Վեհափառ Հայրապետը, խոսելով Սպատ ու Անկախ Հայաստանի, հայ ժողովրդի ու Հայ Եկեղեցու ներկայի ու պայծառ ապագայի մասին, կրկին անգամ բոլորին հրավիրելով այցելել "մեր բոլորիս հայրենիքը՝ Հայաստան, և հայության սրբություն սրբոցը՝ Մայր Սրոո Ս. Էջմիածին":

Հաջորդ օրը, Մայիսի 14-ին, առավոտյան ժամը 9.00-ից, Վեհափառ

Հայրապետը շարունակեց իր Հովվապետական այցելությունը Պոլսահայ ժողովրդին: Նորին Սրբությունը, ուղեկցությամբ Ամենապատիվ Տ. Գարեգին Բ Պատրիարքի, Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների ներկայացուցիչների և իր շքախմբի, այցելեց Գատրգյուղի Ս. Թագավոր, Սկյուտարի Ս. Խաչ, Բերայի Ս. Երրորդություն, Ղալաթիայի Ս. Գրիգոր Լուսավորիչ և Ֆերիգյուղի Ս. Վարդանանց եկեղեցիներ: Վեհափառն այցելեց և հոգեհանգստյան պաշտոն կատարեց Սկյուտարի ու Շիշլիի ազգային գերեզմանոցներում, Դուրյանի, Զարիֆյանի, Ռեթեոս Պերպերյանի ու Պալյանների շիրիմներին, Բերայում՝ Հակոբ Կաթողիկոս Զուղայեցու, Ղալաթիայում՝ Հովհաննես Կոլոտ Պատրիարքի գերեզմաններին: Ամենուրեք բազմահոծ ժողովրդի ուրախությունն ու հուզումը այսօր մի նոր՝ աստիճանի էր բարձրացել և եկեղեցիների դռներին մոտենալու համար երկար ժամանակ էր պահանջվում: Վեհափառի կարճատև այցելությունը Կ. Պոլիս իր ավարտին էր մոտենում, իսկ ժողովրդի ցնծությունն ու հոգևոր ապրումները այնքան արտառուչ էին, այնքան անմիջական... "Կրկին ե՞րբ պիտի վերադառնաք, Վեհափառ" – երիտասարդներից մեկի այս հուզախառն հարցումը հուզեց և՛ Վեհափառին, և՛ իր ուղեկիցներին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄՈՏ

Այո, Կ. Պոլսում ժողովուրդ և Եկեղեցի մեկ ամբողջություն են կազմում՝ ժողովուրդը Եկեղեցունն է, Եկեղեցին՝ ժողովրդինը, իսկ Հայոց Հայրապետը՝ բոլորի հայրն է ու միաբարիչը:

Իսկ Վեհափառը այս կարճ այցելության ժամանակ ոչ միայն շրջագայում էր ու հանդիպում, ոգևորում ու ոգեշնչում, աղոթում ու քարոզում, միաբարում ու աջակցում, այլ նաև դաստիարակում ու

ուսուցանում, ցույց տալիս հայեցի ապրելու, քրիստոնյա ապրելու, ապագայի հստակ ծրագրով ապրելու ճանապարհը: Այս առումով հատկանշական էր պատմական Բերայի Ս. Երրորդություն եկեղեցում Նորին Սրբության քարոզը.

«Փառք և գոհություն կրնծայեմ Աստուծո որ ինձի տվավ այս հոգեղից պահը ձեզի հետ հաղորդակից դառնալու: Մեկնումես ավելի քիչ քան 24 ժամ առաջ հոս եկած եմ սա պահուն: Ահավասիկ իր ավարտին կհասնի իմ Պոլիս այցելությունը: Իմ իսթանպուլ այցելությունը այս անգամ թե՛ միջեկեղեցական բնույթ ունեցավ և թե՛ հովվապետական: Այսօր ինքնամփոփումի, մտասևեռումի պահ է, գիտակցելու համար այն անփոփոխելի ճշմարտությունը, թե պատմությունը անշարժ չէ, այլ փոփոխություններու թատերաբեմ մըն է: Երբ կհիշեմ այս եկեղեցին, մանկությունս կուգա միտքս: Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսը այստեղ է, որ շիջեցավ: Դուք ձեր սերը Էջմիածնի հանդեպ պաշտամունքի աստիճանի հասցուցիք: Բազմաթիվ քրիստոնյաներ եկան, անցան հոսկե, եկան, պաշտամունք մատուցին. պատմությունը փոխվեցավ: Երբ ես փոքրիկ տղա մըն էի, գյուղի մը ուղքատիկ եկեղեցիի մը կամարներուն տակ երբ բուրվառ կընեի, ի՞նչպես գիտնայի, որ այսօր հովվապետ մը պիտի ըլլամ:

Պատմությունը անընախատեսելի դեպքերու շղթա մըն է: Եթե մեր աչքերը հառենք դեպի Հայաստան աշխարհ, կտեսնենք, թե ամեն ինչ փոփոխության ենթարկված է: Ո՛ւր էինք երեկ և ո՛ւր հասած ենք այսօր: Յոթանասուն տարիներ Հայաստան աշխարհի մեջ բռնապետական վարչակարգ տիրեց: Մեր ժողովուրդը չկարողացավ շարժիլ իր սեփական կամքով: Եկեղեցիի կյանքը անպետ դարձնելու աշխատանք տարվեցավ: Այսօր, Փառք Աստուծո, ազատ ու անկախ Հայրենիքի մեջ Քրիստոնեությունը իր վերածնունդը կապրի: Յոթանասուն տարիներ շարունակ Քրիստոնեությունը անտեսվեցավ: Եթե յոթանասուն տարի Պոլտ այս եկեղեցիները փակված ըլլային, եթե գրականության մեջ Քրիստոս բառը արգիլված ըլլար, եթե արևագալները, հսկումները, պսակները, մկրտությունները, թաղումները արգիլվեին, ի՞նչ պիտի ըլլար մեր վիճակը այսօր: Փա՛ռք քեզ Տեր, խորհուրդ մարդկանց, կամքն Աստուծո:

Այս եկեղեցին Սուրբ Երրորդություն կկոչվի: Քեր Պատրիարք Հայրը ըսավ, որ բնակչության տեսակետե անշքացած է այս եկեղեցին, բայց փույթ չէ: Տոնական օրերուն կուգաք, հոգեկան սնունդ կստանաք այստեղ: Այստեղեն է, որ կսկսի մեր հոգևոր կյանքը: Այստեղ է, որ կկազմվին ընտանիքները, սուրբ պսակի արարողությամբ: Մեղա՛ կրսենք, կսրբվինք մեր մեղքերեն և դուրս կելլենք մաքրված սիրտերով: Կծնինք եկեղեցիին մեջ և կմեռնինք դարձյալ եկեղեցիին մեջ:

Սիրելի հարազատ հավատացյալներ. ես չորրորդ անգամ է, որ կխոսիմ այսօր: Առավոտուն խոսեցա Գատրգյուղի Ս. Թագավոր եկեղեցվո, ապա Սկյուտարի Ս. Խաչ եկեղեցվո, ապա Պաղլարպաչրի և Շիշլիի Գերեզմանատուներուն մեջ:

Կճանչնամ աշխարհի բոլոր հայ գաղութները: Մեկ տարին ի վեր Հայաստանի մեջ կբաժնեմ Հայաստանցիներու ցավն ու ուրախությունը: Փորձություն մը կա մեր առջև, հանրապետական, դյուրակեցության մտայնություն մը տարածում գտած է մեր մեջ: Նոր արդիապաշտ գաղափարներ ծնունդ առած են: Մենք այսօր հոգևոր-բարոյական արժեքներեն նահանջելու, տկարանալու

փորձության առջև կգտնվինք: «Կեր, արբ և ուրախ լեր»-ի մտայնություն մը կտիրե ամենուրեք: Ռեթեոս Պերպերյանի որդին՝ Շահան Պերպերյան եղած էր մեր ուսուցիչը: Ան իր դասախոսություններու ընթացքին մեզի կըսեր. «Եթե կյանքը կեր, արբ և ուրախ լեր է, ուրեմն ի՞նչ է կյանքի իմաստը: Եթե ուտել է, ուրեմն մարդ արարածը ի՞նչ տարբերություն ունի այն կովեն, որ պարտեզին մեջ խոտ կուտե»:

Աշխարհ կուգանք կարծես սպառելու համար: Նկատելի է, որ գաղափարական արժեքներե կպարպվինք այսօր: Քանի՞ երիտասարդներ կան, որոնք ճանչնան Պետրոս Դուրյանը, Միսաք Մեծարենցը, Չոհրապը, կարդացած ըլլան անոնց գործերը: Այս անձերն են, որ մշակույթը բարձր մակարդակի հասցուցին: Ի՞նչ է ներկա երաժշտությունը: Փոխ առնված, մակերեսային երաժշտությունը: Իր գրականության ու եկեղեցիին սնուցումին պետք ունի մեր ժողովուրդը: Այս եկեղեցին ձեր աչքի բիբին պես պահեցեք: Ո՛չ թե գնայուն, ճոճիմ, այլ մնայուն արժեքներու հետամուտ եղեք: Աշխարհի փոփոխություններուն մեջեն ընտրել գիտցեք լավը և պահպանեցեք զայն: Այն ազգը, որ ընտրելու կարողությունը չունի, չի կրնար երկար տոկալ և ստեղծագործ դառնալ:

Արթնցի՛ր, ժողովուրդ հայոց, Աստված նոր էջ մը բացավ քու պատմության մեջ: Քու ոսկեդարյան մշակույթդ բա՛րձր պահե, գիտցիր տեր դառնալ քո արժեքներուդ, ցորեանը հարդեն զատելով, լավը գեշեն զատորոշելով, գեղեցիկը տգեղեն գերադասելով:

Սիրելի աշակերտներ. այսօր ձեր վառ աչքերուն մեջ և կայտառ դեմքերուն վրա ես մեր ապագան կտեսնեմ: Ամուր կառչեցեք մեր մտավոր ու հոգեկան արժեքներուն, առանց դպրոցի եկեղեցին որբ կմնա: Առանց եկեղեցիի դպրոցը կաղքատանա»:

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետը հետևյալ հայտարարությունն արեց Պոլսահայ մամուլի միջոցով.

«Մեր վերադարձեն առաջ սրտի պարտք կզգանք նախ մեր ջերմագույն սիրո և շնորհակալության զգացումները հայտնել Հույն Ուղղափառ Եկեղեցվո Տիեզերական Պատրիարքին՝ Բարթոլոմեոս Ա Պատրիարքին, որուն հրավերով եկանք այստեղ: Առաջին անգամ ըլլալով պատմության մեջ կպատահի այսպիսի սերտ, եղբայրական հանդիպում մը, ապագայի գործակցության ծրագրումի իմաստով և ո՛չ թե միայն փոխադարձ և ձևական հարգանքի իմաստով: Մենք ունեցանք Նորին Սրբության և իր եպիսկոպոսներուն, միտրոպոլիտներուն հետ հանդիպում և խոսեցանք թե ապագային ինչպես երկու Եկեղեցիները սերտորեն գործակցին իրարու հետ: Նստաշրջան եղավ մեր այս հանդիպումը, իրենց սինոտի այն անդամներուն հետ, որոնք կգբաղին Էքումենական հարցերով և հատկապես ոչ-Քաղկեդոնական եկեղեցիներու հետ հարաբերության կենսական և կարևոր գործով: Ես կմաղթեմ որ Տիեզերական Պատրիարքությունը օրե օր առավել ծաղկի և զարգանա և ամբողջ Հույն Ուղղափառ Եկեղեցվո հավատացյալները զգան Ն. Ս. Բարթոլոմեոս Ա-ի սերն ու հայրական հոգածությունը, ինչ որ եղած է պատմական դերը՝ Կոստանդնուպոլսո Տիեզերական Պատրիարքության:

Երկրորդ, ջերմագին իմ շնորհակալություններս, իմ եղբայրական սերս

կհայտնեմ նաև մեր սիրելի Պատրիարքին՝ Գարեգին Պատրիարքին և Կոստանդնուպոլսո Հայոց Աթոռին, Իսթանպուլի ամբողջ հայ ժողովուրդին, կարգադիր հանձնախումբի անդամներուն, զայն գլխավորող Մեսրոպ Սրբազանին, նաև ուրիշ ազգայիններու, որոնց կենսունակ մասնակցությամբ իր գործը կատարեց այս ընդունելության մեծ հանձնախումբը: Նաև բոլոր մեր սրբազան, վարդապետ, քահանա, սարկավագ աստիճաններուն վրա գտնվող հոգևորականներուն և բոլոր այն եկեղեցիներու թաղականությանց կամ հոգաբարձությանց, որոնք իրենց ուսերուն վրա կշալկեն ազգային եկեղեցական կյանքի պարտավորությունները՝ դարերու մեջ:

Ես կուզեի նաև իմ շնորհակալությունը և ամենաջերմ խոսքը ուղղել մեր սիրեցյալ ժողովուրդին: Այդ ժողովուրդին մեջ տեսա այնպիսի աշխուժ հավատքի արտահայտություն, որ այդ արտահայտությունը ինձի համար իսկապես եղավ ներքին ինքնազորացման կարևոր ազդակ: Ես հիմա կմտածեմ, որ երբ վերադառնամ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, թե՛ մեր միաբանության և թե՛ ժողովուրդին ի՞նչպես պիտի կարենամ փոխանցել կենդանի հաղորդականությամբ այս հավատքին եռացումը մեր ժողովուրդին մեջ, Պոլսո այս սքանչելի հայ ժողովուրդի կյանքին մեջ: Այս առթիվ բնականորեն մեկ ցավ պիտի հայտնեմ: Ան է, որ շատ կարճ տևեց այցելությունս և երանի՛ ավելի ժամանակ ունենայի բոլոր եկեղեցիները կարենալ այցելելու: Եվ այն եկեղեցիները, այն թաղերը, որ չկրցա այցելել, կուզեմ, որ դուք, մամլո ներկայացուցիչներդ, թարգմանը ըլլաք իմ զգացումներուն, հայտնելու իրենց բոլորին, որ իրենք կմնան իմ հոգիիս մեջ ներկա, աղոթքներուս մեջ միշտ զանոնք կհիշեմ և կխոստանամ, եթե Աստված ինձի տա ժամանակ, երկրորդ անգամ ավելի երկար կմնամ, ո՛չ մեկ ժողովուրդ, ո՛չ մեկ Եկեղեցի և ո՛չ մեկ թաղ ինքզինքը անմասն զգացած կըլլա հայրապետական այցելութենես:

535-ամյակը տոնեցինք մեր հայոց Պատրիարքության: Ես հպարտ եմ այդ 535 տարիներու այն սքանչելի ժառանգության համար, որ Պոլսո Հայոց Պատրիարքական Աթոռը թողուց պատմության ընթացքին 1461 թվականեն մինչև այսօրվան թվականը: Սա, ինչպես ըսի հանախ հրապարակային խոսքերուս մեջ, այնպիսի գիտակցական հոսանքի մը պետք է վերածվի մեր նոր սերունդին մեջ, որ ան ինքն իրեն հարցնե. եթե մեր հայրերը դժվարին պայմաններու տակ 535 տարի հավատարիմ հետևողականությամբ, շարունակաբար պահեցին կենդանի այս հավատքը ապա, ի՞նչ է մեր պակասը, որ զայն առավել ևս կենդանի չպահենք այս դարուն մեջ, ներկա դարուն մեջ: Եվ հետևաբար իմ վերջին խոսքս կուղղեմ երիտասարդ սերունդին. որքա՜ն տպավորվեցա դպրոցական աշակերտներու այն վառ, կենսուրախ ընդառաջումեն, մեր այցելությանց ընթացքին: Եվ կուզեմ, որ անոնք գիտնան ճշմարիտ արժեքները, մարդկային կյանքին առողջություն և երջանկություն բերող արժեքները և բարոյական սկզբունքները խառնեն իրենց արյունին մեջ, դառնան անոնք համոզում անձնական և միաշաղախվին իրենց կյանքին ու գործերուն մեջ:

Թող Աստված օրհնե մեր սիրեցյալ ժողովուրդը Իսթանպուլի մեջ, նաև ամբողջ Թուրքիո մեջ տարածված մեր ժողովուրդը, որպեսզի մենք կարենանք այդ ժողովուրդով հպարտ զգալ, մենք զմեզ միացած զգալ և այն սերը, այն անկեղծ կապվածության զգացումը, զոր ես տեսա Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ, այդ սերը և այդ կապվածությունը առավել ևս խորանա և ամրանա, որովհետև

ամեն մեկ ազգ իր հոգևոր մեկ ծննդավայրը ունի: Մեր ծննդավայրը Ս. Էջմիածինն է: Եվ կուզեմ որ այլևս մեր նոր կյանքի պայմաններում տակ, ազատ ու անկախ կյանքի պայմաններում տակ, իրենց սերը առավել ևս աճի և իրենց կապվածությունը դառնա մշտական հարաբերության երևույթ մեր ապագա կյանքին մեջ: Մանավանդ, մանավանդ կկրկնեմ այս մեկը: Մենք կպատրաստվինք 1700-ամյակը տոնելու մեր Եկեղեցվո պաշտոնական հիմնադրության: Աշխարհի մեջ չկա ուրիշ ազգ մը, որ կարենա 1700-ամյակ տոնել այն իմաստով, ինչ որ մենք պիտի ընենք: Ամբողջ քրիստոնյա աշխարհը կպատրաստվի 2000-ամյակը տոնելու Քրիստոսի ծննդյան: Մենք պիտի մասնակցինք իբրև Քրիստոնեություն, բայց մենք առանձնահատկություն մը ունինք: Այն, որ մենք երրորդ հազարամյակը պիտի բանանք 1700-ամյակի նշումով: Ի՛նչ Աստվածային շնորհ մըն է այս և ես կոչ կուղղեմ մեր ամբողջ նոր սերունդին, որ պատրաստվի և այդ թվականը դարձակետի մը վերածե, վերածննդյան նոր շրջանի վերածե մեր պատմության դարավոր ընթացքին մեջ: Հետևարար կշնորհավորեմ իրենց այդ կենդանի հավատքը:

Անգամ մը ևս իմ գնահատանքը կհայտնեմ մեր մամլո ներկայացուցիչներուն: Եվ իսկապես, եզակի երևույթ էր ինձի համար, տեսնել ձեր մամուլին կապվածությունը մեր Պատրիարքության, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և մեր Եկեղեցիին: Ատիկա մեր ժողովուրդի դաստիարակության, հոգևոր կազմավորման ամենեն ուժեղ ազդակն է: Եվ գիտեք բոլորդ, որ ըսված է, թե «խոսքը կթռչի, գիրը կմնա»: Ժողովուրդը լսեց զիս, լսեց պատգամներս, բայց ձեր թերթերուն մեջ արձանագրվածները կմնան իբրև հուշարար: Ես կգնահատեմ ձեր այդ սրտաբուխ, լաղնախոհ վերաբերումը, զոր ցույց տվիք մեր այցելության հանդեպ, Աստված օրհնե ձեզ և օրհնե այն ժողովուրդը, որ մամուլով կհաղորդակցի և կմասնակցի հայ կյանքին: Կոչ կուղղեմ բոլորիդ, որ մամուլին դերը առավել ևս գնահատեք, ավելի քան ինչ որ ըրած եք մինչև այսօր»:

Իսկ թուրքական հեռուստատեսությունն ու մամուլը փոխել էին իրենց կեցվածքը և դրականորեն ու մանրամասն ներկայացնում էին Վեհափառի Կ. Պոլիս այցելությունն ու շրջագայությունները:

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ

15 Մայիսի, 1996 թ. – Ավարտվել է Վեհափառ Հայրապետի առաջին հովվապետական այցելությունը Պոլսահայությանը: Շուտով հայկական օդանավը Վեհափառին պիտի հասցնի հայրենիք: Սակայն մինչև թռիչքը դեռ մի քանի ժամ կա, և Վեհափառը շտապում է Պեշիկթաշ՝ Պալյանների կառուցած շքեղապարդ Ս. Աստվածածին եկեղեցի, ուր հայություն է հավաքվել: Հուսիչ էր պահը: Ընդամենը մի քանի րոպե, և բոլորն ուզում էին Վեհի Աջն առնել, օրհնությունն ստանալ:

Իսկ Պատրիարքարանում ու Մայր եկեղեցում հրաժեշտի էին պատրաստվել Հայոց Պատրիարքն ու հոգևորականները, Հայրապետական այցելության Կարգադիր Հանձնախումբը, Տիեզերական Պատրիարքի ներկայացուցիչ երեք Միտրոպոլիտները, բազմաթիվ հավա-

տացյալներ: Մայր եկեղեցում նախ խոսք առավ Պատրիարք Հայրը և շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին այս շնորհաբեր այցելության համար: «Դուք մեր ժողովուրդին աչքերուն մեջ տեսաք այն սերը, զոր մեր ժողովուրդը ունի Ձեզի ու Ս. Էջմիածնի նկատմամբ», ասաց Պատրիարք Հայրը և ավելացրեց, որ Վեհափառը կարող է վստահ լինել, որ Պոլսահայ ժողովուրդը միշտ պատրաստ է իր օգնությունը բերելու Սմենայն Հայոց Հայրապետին ու Ս. Էջմիածնին: Ապա հրաժեշտի խոսք ասաց Վեհափառ Հայրապետը.

«Հոգևոր եղբայրներ և սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Այս անցնող շաբաթը բացառիկ հոգևոր հարստության աղբյուր մը եղավ մեր բոլորին համար թե՛ միջեկեղեցական գետնի վրա և թե՛ ազգային եկեղեցական հոգևոր կյանքի մեջ: Եվ հետևաբար մեկնելես առաջ կուզեմ իմ խորագույն և ամենաջերմ շնորհակալությունը, բարձրագույն աստիճանի գնահատանքը հայտնել մեր սիրելի Պատրիարք Սրբազանին և Ընդունելության Հանձնախումբին, եպիսկոպոսաց դասուն, քահանայից, վարդապետաց, սարկավագաց, դպրաց դասերուն, որոնք այս այցելությունը ընդունեցին որպես սիրո գերազանց արտահայտություն մեր Եկեղեցիին և մեր ազգին համար:

Ձեզի ուղղված խոսքս շարունակելն առաջ, կուզեմ այստեղ իմ շնորհակալությունները հայտնել Տիեզերական Պատրիարք Բարթոլոմեոս Ա-ի (այստեղ Վեհափառ Հայրապետը ֆրանսերենով շնորհակալության և երախտագիտական արտահայտություններ ունեցավ Հունաց Պատրիարքարանի երեք ներկայացուցիչներին, որոնք ողջերթի էին եկել Հունաց Պատրիարքի կողմից) :

Մեր ժողովուրդին հավատքին վառ կենդանությունը իմ սպասածես ավելին էր: Կարդալը ուրիշ բան է Պոլսո մասին, Պոլիսը տեսնելն ուրիշ: Ես այսպես զգացի: Տեսա ձեր եկեղեցիներեն ոմանք: Տեսա ձեր դպրոցներեն ոմանք, տեսա այս գաղութին պատիվը եղող հաստատություններեն մեկը՝ Ս. Փրկիչ Ազգային Հիվանդանոցը, տեսա շատ մը ուրիշ կազմակերպություններ, դպրաց դասեր, բարեգործական, բարեսիրական, մշակութային կազմակերպություններ: Այս ճամբան մեր ճամբան է աշխարհիս մեջ, այս ճամբան Քրիստոսով գծված, մեր հայրերով պատրաստված և մեզ դեպի մեր ապագան տանող ճամբան է: Միշտ կապվա՛ծ մնացեք այս եկեղեցիին: Ինչո՞ւ: Հավատքին մեջ չափ չկա: Մի՛ ըսեք, որ ես հավատացել եմ ու կբավե: Հավատացյալ ըլլալը միշտ ներքին ուժականության և նաև աճումի զորություն է: Ատոր համար այն արժեքները, որոնք դուք կհավատաք, թե կկազմեն ձեր կյանքին բուն էությունը, այդ արժեքները բարձր պահեցեք և վստահ եղեք, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը շատ տաք տեղ մը ունի ձեր բոլորին համար: Որովհետև կգնահատե այն հավատքը, որ այնտեղեն ծագեցավ մեր ազգին և մեր պետության վրա՝ Քրիստոնեական հավատքին լույսը, և մենք երջանիկ կզգանք Ս. Էջմիածնի մեջ, երբ այդ լույսին ճառագայթները այսքան շոայլ փայլությամբ կտեսնենք մեր գաղութներուն մեջ:

Շնորհակալություններս կհայտնեմ Պատրիարք Սրբազանին և բոլոր այն անձերուն և Ընդունելության Հանձնախումբեն սկսյալ մինչև մեր մասնո ներկայացուցիչները, որոնք դեպքի վերածեցին, պատմության մեջ անմոռանալի արձանագրելի և հաջորդ սերունդներուն համար ընթեռնելի և ուսանելի դեպքի վերածեցին այս հովվապետական անդրանիկ այցելությունը: Եվ այս առիթով

կուզեմ ես փոքրիկ հիշատակ մը թողուլ մեր պոլսահայ կյանքին եկեղեցական կյանքի ավագ ներկայացուցիչներուն, առաջին հերթին Պատրիարք Սրբազանին Պատրիարքության 535-ամյակի առիթով. իր ունեցած բազում տեսակի պանակներու կարգին ուզեցի որ կրե նաև այս պանակեն, որ զուտ հայու գործ է (Վեհափառ Հայրապետը այստեղ Պատրիարք Սրբազանի պարանոցից կախեց մի գեղեցիկ պանակ և ողջագուրվեց Պատրիարք Սրբազանի հետ):

Շահան Սրբազան, դուք երկար տարիներ ծառայեցիք մեր Սուրբ Աթոռին, այստեղ, որպես Էջմիածնի հարազատ զավակ, ծառայեցիք այս գաղութին, Պոլսահայության և մինչև այսօր կշարունակեք: Կուզեմ ձեր բազում տարիներու իբրև գնահատանք և նոր տարիներու իբր խթան՝ առավել գործի, փոքրիկ հիշատակ մը հանձնել ձեզի ինձմե (Մի գեղեցիկ Պանակ էլ զետեղեց Շահան Սրբազանի կրծքին):

Մեսրոպ Սրբազան, տեսա այն գործունյա աշխուժությունը, զոր ցույց տվիք, որպեսզի 535-ամյակը անցյալի ժառանգության վրա ավելցնե նոր շողեր: Կմաղթեմ, որ շարունակեք ձեր այդ եռանդագին գործունեությունը, միշտ այն լայնախոհ հոգիով և ամբողջական տեսությամբ մեր ժողովուրդին և Աստված նորանոր հաջողություններ շնորհե քեզի (Մի գեղեցիկ Պանակ էլ հանձնվեց Մեսրոպ Արքեպիսկոպոսին):

Եվ սիրելիներ, ուրիշ նվեր մը ունիմ, որ նյութ չէ: Այդ նվերս մեկ անուն ունի: Հայրապետական սերս ձեր բոլորիդ: Ձեր սրտերուն մեջ խառնեցեք իմ սերս, և ձեր սերեն ալ եթե ինձի փոխանցեք, ինչպես զգացի, այդ ալ զիս պիտի զորացնե: Եվ առողջությանս ալ պիտի նպաստե:

Եվ դուք չանցցիք զիս հոգնեցնել, ապրի՛ք: Բայց զգացիք, չէ՞, որ դուք ավելի հոգնեցաք, քան թե ես: Ձեր սերն է իմ զորության աղբյուրը և պահենք այդ սիրո կապը ընդմեջ Հայրապետության Ամենայն Հայոց և համայն ժողովրդյան, Պոլսահայության և Պոլսո Պատրիարքության:

«Շնորհք Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեսեանդ. ամէն»:

Հրաժեշտի խոսքից անմիջապես հետո Վեհափառ Հայրապետը ուղևորվեց օդանավակայան: Նախատեսվածից չորս ժամ առաջ օդանավը Հայոց Հայրապետին հասցրեց «Զվարթնոց» օդանավակայան, ուր Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմավորեցին Մայր Աթոռի միաբանության և պաշտոնեության ներկայացուցիչները:

Ինչպես նշեց Նորին Սրբությունը, այցելությունը մի նոր առիթ հանդիսացավ, որպեսզի պոլսահայ հավատացյալ ժողովուրդը ավելի մոտ զգա Մայր Աթոռի ներկայությունը, և վերանորոգության, վերազարթոնքի շունչը տարածվի նրանց հոգիներում:

Աբրահամ Վրդ. Մկրտչյան